# ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

ՀԱՅՄԵՏԱՔՍՏՐԵՍՏ

ԵՐԵՎԱՆ 1942

638.2 170ե
Ի-61 Ի՞նչպես կազմա-
կերպել հաշվապահական
հաշվառումը. կոլխոզներում
Գր.

633.9
Ի-51

Հաստատում եմ՝
Հայկական ՍՍՌ Հողժողկոմ
ՄԱՐՋԱՆՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՑԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

A 19302

ՀԱՅՄԵՏԱ. ՔՍՏՐԵՍՏ

ԵՐԵՎԱՆ 1942

Ձեռնարկը մշակել և նրա որոշ նյութերը թարգմանել ու կազմել են՝

Գյուղատնտես՝ Հ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Պատ. խմբագիր՝ Շ. ԳԱԼՍՏՅԱՆ

# ՆԱԽԱԲԱՆ

Շերամապահությունը հանդիսանում է մետաքսի արդյունաբերության հումքի բազան: Մեծ է նրա նշանակությունը աճող սոցիալիստական տնտեսության, հատկապես արդյունաբերական մի շարք ճյուղերի և կոլխոզային տնտեսության մեջ:

Ցարական իշխանության օրոք այդ թանկարժեք, ինչպես և մի շարք այլ տեխնիկական կուլտուրաներ գտնվում էին խղճուկ վիճակում:

Շերամապահությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Ռևոլյուցիայի նախօրյակին գտնվում էր անկման շրջանում. նրա արտադրանքը չնչին քանակություն էր կազմում, որը չէր բավարարում ժող. տնտեսության պահանջներին:

Սովետական կարգերն, ինչպես բազմաթիվ տեխնիկական կուլտուրաների, նույնպես և շերամապահության համար ստեղծեցին զարգացման հարուստ հեռանկարներ:

Հիմնովին փոխվեց շերամապահական տնտեսության և արդյունաբերության ձևը. պետականացվեց գրենայի արդյունաբերությունը, որը գտնվում էր մասնավոր մարդկանց ձեռքին, հայտարարվեց մոնոպոլիա բոժոժի մթերումների և վաճառքի նկատմամբ, կառուցվեցին նորանոր մետաքս արտադրող պետական գործարաններ, ստեղծվեցին շերամապահ տնտեսությունների ագրոպասարկման ձև և այլն:

Այդ բոլոր միջոցառումները խոշոր խթան հանդիսացան սոցիալիստական շերամապահության բարգավաճման համար և կարճ ժամանակաշրջանում գրեթե եռապատկվեց (մինչռևոլյուցիոն շրջանի համեմատությամբ) մթերվող հում նյութի՝ բոժոժի արտադրանքը: Վերջին 10 տարվա ժամանակաշրջանում մետաքսյա գործվածքների արտադրանքն աճել է 6 անգամ:

Միության ազգային ռեսպուբլիկաների եղբայրական Ստալինյան համերաշխ ընտանիքի մեջ, ՀՍՍՌ-ն, ինչպես այլ ճյուղերում, նույնպես և սոցիալիստական շերամապահության բնագա-

վառում նույնպես ունի զգալի նվաճումներ։ 1941 թ. ՀՍՍ Ռեսպուբլիկայում մթերվել է մոտ 9 անգամ ավելի բոժոժ, քան մթերվում էր մինչռևոլուցիոն շրջանում։ Կառուցված են գրեն գործարաններ, որոնք տարեկան արտադրում են 60—65 հազար տուփ բարձր որակի գրենա, բարձրացել է բոժոժի միջին բերքատվությունը՝ տալով աճ 2,5 անգամ. տարեց-տարի աճում են սոցիալիստական շերամապահության վարպետների՝ շերամապահների շարքերը։ 1940 թ. Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսին իրենց բարձր ցուցանիշներով մասնակցում էին 153 թեկնածուներ, այդ թվում կոլտնտեսություններ՝ 10, Շրջկետաքս՝ 1, գրեն գործարան՝ 1, կոլտնտեսական-շերամապահներ՝ 118 հոգի, առաջավորներ՝ 23 հոգի։

ՍՍՌ Միության Ժողկոմսովետի և ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի 1941 թ. մարտի 13-ի որոշման մեջ ասված է՝ «ՍՍՌ Միության Ժողկոմսովետը և ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն շերամապահությամբ զբաղվող շրջանների սովետական և պարտիական կազմակերպությունների առջև, դնելով որպես կարևորագույն խնդիրներից մեկը՝ տնամերձ և մանավանդ հանրային շերամապահության հետագա զարգացման հիման վրա, հասնել հինգ տարվա ընթացքում բոժոժի արտադրության առնվազն կրկնապատիկ ավելացման և մեկ տուփ գրենայից առնվազն 50 կիլոգրամ բոժոժի բերքի»։ Այդ պատմական նշանակություն ունեցող որոշումը ՀՍՍՌ-ի Ժողկոմսովետը և ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն քննության առան և 1941 թ. մարտի 19-ին ընդունեցին որոշում՝ ռեսպուբլիկայի շերամապահության հետագա զարգացման միջոցների մասին։

Այդ որոշումները կենսագործելու համար խոշոր անելիքներ ունեն մեր շերամապահական կոլխոզները, քանի որ վերջին տարիներս Միության մեջ և նամանավանդ մեր Ռեսպուբլիկայում շերամապահությունն անհատական տնտեսության ձևից անցել է հանրային տնտեսության ձևին (1941 թ. ՀՍՍ Ռեսպուբլիկայում մթերված բոժոժի 95 տոկոսը տվել են կոլտնտեսությունները)։

Սակայն պետք է նշել, որ մեզ մոտ կուտակված նյութերից պարզվում է, որ հանրային շերամապահության կազմակերպման գործում առանձին շրջաններում ու կոլխոզներում կան զգալի կազմակերպական և տեխնիկական թերություններ։

Նպատակ ունենալով էլ ավելի զարգացնել հանրային շերամապահությունը, վերացնելու այդ ասպարեզում գոյություն ունե-

ցող թերությունները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային շերամապահությանը նվիրված գրականություն չկա, Հայմետաքսատրեստն ձեռնարկեց այս բրոշյուրի հրատարակումը։

Այս աշխատությունն իր մեջ պարունակում է բավականին հարուստ նյութեր՝ նվիրված հանրային շերամապահության հարցերին, որն անկասկած կօժանդակի սոցիալիստական հանրային շերամապահության ամրապնդման և հետագա զարգացմանը, կօգնի շերամապահությամբ զբաղվող կոլխոզներին՝ կազմակերպորեն և տեխնիկապես ավելի բարձր հիմքերի վրա դնելու հանրային շերամապահությունը մեր կոլխոզներում։

Հայմետաքսատրեստի կառավարիչ՝ ԳԱԼՍՏՅԱՆ

# ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՍՍՌ Միության Ժողովրդական Կոմիսարների Սովետի և ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի 1941 թ. մարտի 13-ի որոշումը

*ՍՍՌ Միության Ժողովրդական Կոմիսարների Սովետը և ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն շերամապահությամբ զբաղվող շրջանների սովետական և պարտիական կազմակերպությունների առջև դնելով որպես կարևորագույն խնդիրներից մեկը՝ տնամերձ և մանավանդ հանրային շերամապահության հետագա զարգացման հիման վրա, հասնել հինգ տարվա ընթացքում բոժոժի արտադրության առնվազն կրկնապատիկ ավելացման և մի տուփ գրենայից առնվազն 50 կիլոգրամ բոժոժի բերքատվության՝* որոշեցին.

### I. ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

*1. Սահմանել 1941—1947 թվականներին կոլխոզներում պարտադիր կարգով թթենի տնկելու հետևյալ պետական պլանը՝*

| Ռեսպուբլիկաների, երկրամասերի և մարզերի անունը | Կոլխոզներում թթենի տնկելու 1941—1947 թ. թ. պետական պլանը | | | |
|---|---|---|---|---|
| | Թփային, ցածրաբուն և բնային պլանտացիաներ (հազար հեկտար) | | Բարձրաբուն, գծային և այլ ծառեր (միլիոն արմատ) | |
| | Ընդամենը | Այդ թվում 1941 թվ. | Ընդամենը | Այդ թվում |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| *Ուզբեկական ՍՍՌ* | 40,0 | 6,0 | 70,0 | 6,0 |
| *Թուրքմենական ՍՍՌ* | 5,4 | 0,5 | 12,6 | 2,0 |
| *Տաջիկական ՍՍՌ* | 11,5 | 1,0 | 15,0 | 1,5 |

| Ռեսպուբլիկաների, երկրամասերի և մարզերի անունը | Կոլխոզներում թթենի տնկելու 1941—1947 թ. թ. պետական պլանը | | | |
|---|---|---|---|---|
| | Թփային, ցածրաբուն և բնային պլանտացիաներ (հազար հեկտար) | | Բարձրաբուն, գծային և այլ ծառեր (միլիոն արմատ) | |
| | Ընդամենը | Այդ թվում 1941 թվ. | Ընդամենը | Այդ թվում 1941 թվ. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Կիրգիզական ՍՍՌ | 4,4 | 0,5 | 6,6 | 1,0 |
| Ղազախական ՍՍՌ | 5,3 | 0,6 | 6,5 | 1,0 |
| Վրացական ՍՍՌ | 6,8 | 0,16 | 13,6 | 2.5 |
| Ադրբեջանական ՍՍՌ | 11,4 | 1,4 | 12,6 | 1,8 |
| Հայկական ՍՍՌ | 1,9 | 0,25 | 4,0 | 1,0 |
| Ուկրաինական ՍՍՌ | 86,0 | 14,7 | 20,0 | 4,13 |
| Մոլդավական ՍՍՌ | 2.2 | 0,15 | 0,8 | 0,065 |
| ՌՍՖՍՌ | 81,27 | 8,1 | 20,6 | 1,535 |
| Այդ թվում | | | | |
| Դաղստանյան ԱՍՍՌ | 2,75 | 0,15 | 0,9 | 0,09 |
| Չեչենո-Ինգուշական ԱՍՍՌ | 2,27 | 0,25 | 0,6 | 0,1 |
| Հյուսիս-Օսեթական ԱՍՍՌ | 0,48 | 0,1 | 0,2 | 0,025 |
| Կաբարդինո-Բալկարական ԱՍՍՌ | 0,9 | 0,5 | 0,5 | 0,1 |
| Օրջոնիկիձեի երկրամաս | 12,0 | 2,0 | 3,0 | 0,5 |
| Կրասնոդարի երկրամաս | 14,4 | 0,5 | 3,6 | 0,26 |
| Ռոստովի մարզ | 9,5 | 0,7 | 2,0 | 0,13 |
| Ղրիմի ԱՍՍՌ | 3,0 | 0,5 | 1,2 | 0,13 |
| Պովոլժյեի գերմանացիների ԱՍՍՌ | 1,87 | 0,3 | 0,4 | — |
| Ստալինգրադի մարզ | 7,7 | 0,7 | 1,6 | — |
| Վորոնեժի մարզ | 14,4 | 1,3 | 3,6 | 0,15 |
| Կուրսկի մարզ | 12,0 | 1,1 | 3,0 | — |

*2. Ուզբեկական, Թուրքմենական, Տաջիկական, Կիրգիզական, Ղազախական, Վրացական, Ադրբեջանական և Հայկական ՍՍՌ-ների կոլխոզներում մտցնել թթենու նոր տնկումների պարտադիր պետական նորմաներ. տնկումները պետք է կատարվեն 1941—1947 թվականների ընթացքում հետևյալ չափով.*

| Ռեսպուբլիկաների անունը | 1941—1947 թ. թ. ժամանակաշրջանում կոլխոզի համար պարտադիր կարգով բրնձի տնկելու միջին նորմանը | |
|---|---|---|
| | Թփային, ցածրաբուն և բնային պլանտացիաներ (հեկտարով) | Բարձրաբուն, գծային և այլ ծառեր (հազար արմատ) |
| *Ուզբեկական ՍՍՌ* | 7,0 | 10,0 |
| *Թուրքմենական ՍՍՌ* | 5,0 | 9,0 |
| *Տաջիկական ՍՍՌ* | 4,0 | 5,0 |
| *Կիրգիզական ՍՍՌ (Օշի, Ջալալ-Աբադի և Ֆրունզեի մարզերը) —* | 4,5 | 6,0 |
| *Ղազախական ՍՍՌ (Հարավային Ղազախական, Ջամբուլի և Կզըլ-Օրդայի մարզերը)* | 4,5 | 5,0 |
| *Վրացական ՍՍՌ* | 2,0 | 4,0 |
| *Ադրբեջանական ՍՍՌ* | 5,0 | 4.5 |
| *Հայկական ՍՍՌ* | 3,0 | 5,0 |

3. *Միութենական ռեսպուբլիկաների ժողկոմսովետների թույլատրությամբ, պարտադիր կարգով թթենի տնկելուց ազատել բարձր լեռնային շրջանների կոլխոզները, ինչպես նաև ոռոգելի հող չունեցող առանձին կոլխոզները:*

4. *Սահմանել, որ 1941—1947 թվականներին Ուկրաինական և Մոլդավական ՍՍՌ-ներում, Դաղստանյան, Չեչենո-Ինգուշական Հյուսիս-Օսեթական, Կաբարդինո-Բալկարական, Ղրիմի ու Պովոլժյեի գերմանացիների ԱՍՍՌ-ներում, Օրջոնիկիձեի ու Կրասնոդարի երկրամասերում, Ռոստովի, Ստալինգրադի, Կուրսկի և Վորոնեժի մարզերում թթենու պարտադիր տնկումներ են կատարվում շերամապահության զարգացման շրջաններում, կոլխոզի համար պարտադիր տնկումների հետևյալ նորմաներով՝*

| Ռեսպուբլիկաների, երկրամասերի ու մարզերի անունը | 1941—1947 թ. թ. ժամանակաշրջանում կոլխոզի համար թթենու պարտադիր տնկումների միջին նորման | |
|---|---|---|
| | Թփային, ցածրաբուն պլանտացիաներ (հեկտարով) | Բարձրաբուն, գծային և այլ տեսակի ծառեր (հազար արմատ) |
| Ուկրաինական ՍՍՌ | 10.0 | 2,0 |
| Մոլդավական ՍՍՌ | 6,0 | 2,0 |
| Դաղստանյան ԱՍՍՌ | 5,0 | 1,5 |
| Չեչենո-Ինգուշական ԱՍՍՌ | 8,0 | 2,0 |
| Հյուսիս-Օսեթական ԱՍՍՌ | 9,0 | 3,0 |
| Կրասնոդարի երկրամաս | 12,0 | 3,0 |
| Կաբարդինո-Բալկարական ԱՍՍՌ | 10,0 | 4,0 |
| Ղրիմի ԱՍՍՌ | 6,0 | 2,0 |
| Պովոլժյեի գերմանացիների ԱՍՍՌ | 10,0 | 2,0 |
| Օրջոնիկիձեի երկրամաս | 12,0 | 3,0 |
| Ռոստովի մարզ | 10,0 | 2,0 |
| Ստալինգրադի մարզ | 10,0 | 2,0 |
| Կուրսկի մարզ | 8,0 | 2,0 |
| Վորոնեժի մարզ | 8,0 | 2,0 |

5. Կոլխոզներում թթենու պարտադիր տնկումներ պետք է կատարվեն սկսած 1941 թվականից, ըստ տարիների համաչափորեն, սակայն այն հաշվով, որ տնկանյութերով ապահովված լինելու դեպքում, կոլխոզները հնարավորություն ունենան ժամկետից առաջ կատարելու թթենու տնկումների այն պլանը, որ սահմանված է 1941—1947 թվականների համար։

6. Կոլխոզներին թույլ տալ բարձրաբուն թթենի տնկելու պարտադիր պլանների հաշվին կատարել պլանտացիաների տնկումներ (թփային, ցածրաբուն և բնային)՝ հաշված մեկ հեկտար պլանտացիա ոչ համատարած մասսիվով տնկված հազար բարձրաբուն, գծային և այլ տունկի փոխարեն։

Այն կոլխոզների համար, որոնք 1938—1940 թվականների ժամանակաշրջանում կատարել են թթենու թփային, ցածրաբուն և բնային պլանտացիաների տնկում և ապահովել են դրանց լիակատար պահպանումն ու պատշաճ խնամքը, կատարված տնկումները մտցնել պարտադիր կարգով թթենու պլանտացիա տնկելու այն նորմաների մեջ, որոնք սահմանված են նրանց համար։

7. Թույլատրել միութենական ու ավտոնոմ ռեսպուբլիկաների ժողկոմսովետներին և երկրային ու մարզային գործկոմներին՝ դիֆերենցիացիայի ենթարկել թթենու պարտադիր տնկումների նորմաներն ըստ մարզերի ու շրջանների, հաշվի առնելով հողային տարածությունները ու գյուղատնտեսության ուղղությունը, անպայման պահպանելով միջին-ռեսպուբլիկական նորմաները։

8. Պարտավորեցնել միութենական ու ավտոնոմ ռեսպուբլիկաների ժողկոմսովետներին, ռեսպուբլիկաների կոմպարտիաների կենտկոմներին, երկրային ու մարզային գործկոմներին, ՀամԿ(բ)Պ երկրկոմներին ու մարզկոմներին՝

ա) 1941—1947 թվականներին թթենի տնկելու պետական պլանը և թթենի տնկելու պարտադիր նորմաները մի ամսվա մեջ հասցնել յուրաքանչյուր կոլխոզին.

բ) սահմանել անտառապաշտպան շերտերի համար և քաղաքները, ավանները, սովխոզները, ճանապարհներն ու մագիստրալ ջրանցքները կանաչապատելու համար թթենի տնկելու 1941—1942 թվականների պլանները։

9. Առաջարկել կոլխոզնիկներին, ինչպես նաև գյուղական վայրերում ապրող բանվորներին ու ծառայողներին՝ թթենու տնկումներ կատարել տնամերձ հողամասերում։

10. Սահմանել պետական ու կոլխոզային տնկարաններում և սովխոզներում 1941—1942 թվականներին սերմաբույսեր և տնկիներ աճեցնելու հետևյալ պլանն ըստ ռեսպուբլիկաների, երկրամասերի ու մարզերի.

| Ռեսպուբլիկաների, երկրամասերի ու մարզերի անունը | 1941 թվական | | 1942 թվական | |
|---|---|---|---|---|
| | Թթենու սերմը ցանել հեկտարով | Տնկիներ աճեցնել հեկտարով | Թթենու սերմը ցանել հեկտարով | Տնկիներ աճեցնել հեկտարով |
| Ուզբեկական ՍՍՌ | 220 | 800 | 220 | 800 |
| Թուրքմենական ՍՍՌ | 40 | 198 | 40 | 120 |
| Տաջիկական ՍՍՌ | 25 | 120 | 70 | 160 |
| Կիրգիզական ՍՍՌ | 25 | 112 | 30 | 60 |
| Ղազախական ՍՍՌ | 20 | 60 | 45 | 70 |
| Վրացական ՍՍՌ | 25 | 225 | 70 | 225 |
| Ադրբեջանական ՍՍՌ | 30 | 80 | 45 | 140 |
| Հայկական ՍՍՌ | 12 | 45 | 15 | 30 |
| Ուկրաինական ՍՍՌ | 400 | 246 | 750 | 350 |
| Մոլդավական ՍՍՌ | 2 | 5 | 16 | 5 |
| ՌՍՖՍՌ | 334 | 138 | 671 | 176 |

Այդ թվում՝

| Ռեսպուբլիկաների, երկրամասերի ու մարզերի անունը | 1941 թվական | | 1942 թվական | |
|---|---|---|---|---|
| | Թթենու սերմի ցանքը հեկտարով | Տնկիների դպրոցը հեկտարով | Թթենու սերմի ցանքը հեկտարով | Տնկիների դպրոցը հեկտարով |
| Դաղստանի ԱՍՍՌ | 15 | 6 | 30 | 6 |
| Չեչենո-Ինգուշական ԱՍՍՌ | 20 | 6 | 22 | 6 |
| Հյուսիս-Օսեթական ԱՍՍՌ | 3 | 6 | 3 | 6 |
| Կաբարդինո-Բալկարական ԱՍՍՌ | 10 | 6 | 10 | 6 |
| Օրջոնիկիձեի երկրամաս | 59 | 30 | 85 | 20 |
| Կրասնոդարի երկրամաս | 45 | 20 | 125 | 25 |
| Ռոստովի մարզ | 51 | 17 | 90 | 20 |
| Ղրիմի ԱՍՍՌ | 22 | 12 | 25 | 12 |
| Պովոլժյեի գերմանացիների ԱՍՍՌ | 16 | 7 | 16 | 10 |
| Ստալինգրադի մարզ | 37 | 6 | 75 | 10 |
| Վորոնեժի մարզ | 28 | 11 | 100 | 25 |
| Կուրսկի մարզ | 28 | 11 | 90 | 20 |
| Ընդամենը ՍՍՌՄ-ում | 1.133 | 2.029 | 1.972 | 2.136 |

11. Պարտավորեցնել ՍՍՌՄ Հողժողկոմատին, ռեսպուբլիկաների ժողկոմսովետներին, միութենական ռեսպուբլիկաների կոմպարտիաների կենտկոմներին, մարզային (երկրային) գործկոմներին, ՀամԿ(բ)Պ երկրկոմներին և մարզկոմներին՝

ա) ընդարձակել պետական ու կոլխոզային տնկարանների ցանցը, համապատասխան դարձնելով դրանց քանակն ու տարածությունը տնկիներ աճեցնելու պլանի հետ.

բ) ապահովել թթենու տունկեր ունեցող կոլխոզների կողմից ճիշտ ձևավորելու, բներն ու պսակը մաքրելու, մոլախոտերը ոչնչացնելու, պարարտացնելու, պլանտացիաները նորոգելու և թթենու բազմաբերք սորտերի մասսայական պատվաստումներ կատարելու աշխատանքների անցկացումը.

գ) ապահովել թթենու տերևի բերքի ավելացումը և թթենու հիվանդությունների ու վնասատուների տարածման բների ոչնչացումը. այդ նպատակով 1941 թվականին կատարել պարտադիր կարգով թթաստանների հողի բարձրորակ խոր մշակումը, անկախ թթենիների հասակից և հետագայում մշակում կատարել ամեն տարի առնվազն երկու անգամ, պահպանելով հողը փխրուն վիճակում և առանց մոլախոտերի.

դ) այն վայրերում, որտեղ չի կարելի տրակտորային կամ ձիաքարշ մեքենաներով փխրեցում կատարել, փորումը կատարել ձեռքով, ստեղծելով յուրաքանչյուր թթենու տակ փխրացած բնամերձ շրջաններ.

ե) թթենու թփային պլանտացիաներում և տնկարաններում մեքենայացնել հիմնական աշխատանքները (պլանտաժային հերկը և աշնանավար, պլանտացիաների շարամեջ մշակում, տնկիների փորում և այլն).

զ) կոլխոզների պլանտացիաների ու տնկարանների մեքենայացված մշակման հետ կապված բոլոր աշխատանքները հանձնարարել ՄՏԿ-ներին.

է) 1941 թվականի պլանի մեջ մտցնել թթարուծության և ջերմապահության կոլխոզային մասսայական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը.

ը) 1941 թվականից «Ագրոլեսսեմ»-ի միջոցով ապահովել տեղական պայմաններում աճեցված թթասերմի ամբողջ պահանջված քանակի մթերումը.

թ) կազմակերպել թթենու տեղական սորտերի լավագույն տունկերի ընտրությունը, ամրացնելով դրանք որպես մայր սերմատուներ:

12. Պարտավորեցնել Ուզբեկական, Թուրքմենական, Տաջիկական, Կիրգիզական, Ղազախական, Հայկական և Ադրբեջանական ՍՍՌ-ների շրջանային գործկոմներին՝ ապահովել թթենու ոռոգումը ժամանակին, նախատեսելով նաև թթենու բոլոր տունկերի պարտադիր ոռոգումը բերքը հավաքելուց հետո 10 օրվա ընթացքում:

13. Արգելել թթենու տունկերի բոլոր տեսակների կտրելն ու արմատահանելը, առանց ռեսպուբլիկաների ժողկոմսովետների թույլտվության: Թթենի կտրելու, արմատահանելու, անասուններ արածացնելով փչացնելու և չորացնելու համար (ոռոգվող շրջաններում) մեղավորները քրեական պատասխանատվության են կանչվում: Ռեսպուբլիկաների ժողկոմսովետների թույլտվությամբ կտրված կամ արմատահանված յուրաքանչյուր ծառի փոխարեն նույն թվականին պետք է տնկվի առնվազն 10 հատ մատղաշ բարձրաբուն թթենի:

14. Թթարուծության բնագավառում կոլխոզների համար սահմանել հետևյալ մրցանակները՝

ա) այն կոլխոզները, որոնք կատարել են թթենի տնկելու պլանը և որոնց ամբողջ տարածության վրա թթենիները բռնել են (կպել են) առնվազն 90 տոկոսով, ստանում են ամսական 200 ռուբլի յուրաքանչյուր հեկտարի համար. տնկված յուրաքանչյուր 500 բարձրաբուն թթենու համար, որոնց առնվազն 90 տոկոսը անվնաս է պահպանվել՝ 100 ռուբլի.

բ) թթենու պլանտացիայի մեկ հեկտարը բազմաբերի սորտով փոխարինելու համար՝ 250 ռուբլի.

գ) մեկ հեկտար ցանքից սերմաբույս աճեցնելու պլանը գերակատարելու յուրաքանչյուր 20 տոկոսի համար՝ 150 ռուբլի.

դ) մեկ հեկտարից ստանդարտային տնկենի ստանալու պլանի գերակատարման յուրաքանչյուր 10 տոկոսի համար՝ 200 ռուբլի չպատվաստած տնկիների համար և 500 ռուբլի՝ պատվաստված տնկիների համար.

ե) թթենու տնկիներ աճեցնելու պլանի գերակատարման համար օղակի կոլխոզնիկներին տալ դրամական լրացուցիչ վարձատրություն 30 տոկոսի չափով, իսկ սորտային թթենի աճեցնելու դեպքում՝ 50 տոկոսի չափով այն գումարից, որը ստանում են կոլխոզները պլանով սահմանված տնկիների քանակից դուրս տնկիներ վաճառելուց:

Սահմանել, որ թթարուծության համար կոլխոզների ստացած բոլոր մրցանակները բաշխվում են բրիգադաների և օղակների անդամների միջև՝ թթարուծության աշխատանքների համար նրանց ստացած աշխօրերի համաձայն. կոլխոզի նախագահը ստանում է բրիգադայի անդամի մրցանակի միջին չափով:

15. Թթարուծության համար մրցանակները վճարվում է ՍՍՌՄ Հողժողկոմատը միութենական բյուջեի հատկացումներից:

16. Պարտավորեցնել ՍՍՌՄ Պետպլանի ժողտնտհաշվառման կենտրոնական վարչությանը՝ 1941 թվականին կատարել թթաստանների համատարած հաշվառումը:

## II. ՇԵՐԱՄԱՈՐԴԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17. Հանրային շերամաբուծության ձևերի մեջ գոյություն ունեցող խայտաբղետությունը վերացնելու նպատակով, հանձնարարել կոլխոզներին.

ա) մշտական շերամապահական բրիգադաներ (օղակներ) ստեղծել առավել որակյալ աշխատողներից այնպիսի քանակությամբ, որն անհրաժեշտ է թթարուծական և շերամապահական աշխատանքները կատարելու համար, այն հաշվով, որ այդ բրի-

գադները (օղակները) շերամաորդի անեցման ժամանակաշրջանում (գլխավորապես թրթուրների վերջին հասակում) համալրվեն անհրաժեշտ քանակությամբ կոլխոզնիկներով՝ այլ բրիգադաներից.

բ) շերամաորդի կերակրմամբ (ներառյալ նաև կերի հայթայթումը) զբաղվող կոլխոզնիկների աշխատանքի վարձատրությունը կատարել աշխօրերի հաշվարկումով, նայած ստացված բոժոժի բերքի քանակին ու որակին։ Թթաբուծության, ինչպես նաև այն բոլոր մյուս աշխատանքների գծով,— որոնք կապված չեն անմիջականորեն շերամաորդի անեցման հետ, աշխօրեր հաշվարկել ընդհանուր հիմունքներով.

գ) շերամաբուծական բրիգադաների և օղակների կոլխոզնիկներին բերքատվության պլանից ավելի ստացված յուրաքանչյուր կիլոգրամ բոժոժի համար տալ լրացուցիչ դրամական վարձատրություն՝ կոլխոզում մեկ կիլոգրամ բոժոժի միջին արժեքի (մթերակայանի վճարած) 75 տոկոսի չափով, ներառյալ հիմնական վարձատրությունը և մրցանակ-հավելումները, որ կոլխոզն ստանում է կոնտրակտացիայի պլանի գերակատարման համար։

դ) շերամաբուծությամբ զբաղվող կոլխոզների արտադրական պլանների մեջ մտցնել շերամաբուծության և թթաբուծության աշխատանքները։

18. Հանրային շերամաբուծությունը լայնորեն զարգացնելու գործին, այն շերամաբույծ կոլխոզնիկներին, որոնք կնքում են բոժոժի կոնտրակտացիայի պայմանագրեր, անհրաժեշտ օգնություն ցույց տալ իրենց շերամաորդերը հաջողությամբ անեցնելու գործում—շերամաբույծ կոլխոզնիկներին ազատել կոլխոզում կատարվող աշխատանքներից 4—5 հասակների շրջանում թրթուրների անեցման համար, պայմանով, որ այդ կոլխոզնիկները անեցնեն առնվազն 0,5 տուփ գրենա, տրանսպորտ տրամադրել կերի փոխադրման և բոժոժի հանձնման համար, վարձատրությամբ նրանց տրամադրել կոլխոզներում պահվող շերամաորդերի համար ավելորդ թթենու տերևի ամբողջ մնացորդը։

19. Շրջգործկոմներին թույլատրել շերամաորդի կերակրման ժամանակամիջոցում հանրային շերամաբուծության կարիքների համար օգտագործելու նպատակով առանց վարձատրության կոլխոզներին ամրացնել այն կերի ֆոնդերը, որոնք գտնվում են սովխոզների, պետական ու հասարակական կազմակերպությունների հողամասերում և երկաթուղիների օտարացման գոտիներում։

20. Հանձնարարել շերամաբուծությամբ զբաղվող կոլխոզներին, յուրաքանչյուր կոլխոզում կառուցել առնվազն 1—2 շերամաբուծարան։

Պարտավորեցնել տեղական պարտիական ու սովետական կազմակերպություններին՝ ամեն կերպ օգնություն ցույց տալ կոլխոզներին հանրային շերամաբուծությունը կազմակերպելու և շերամաբուծարանների կահավորման ու կառուցման համար նրանց տեղական շինանյութեր մատակարարելու գործում։

21. Կոլխոզներում 400 տաքացված տիպի և 2 հազար պարզ տիպի շերամաբուծարաններ կառուցելու համար ՍՍՌՄ Ժողկոմսովետին կից Տնտխորհրդի ռեզերվից 1941 թվականին առանձնացնել 10 հազար խորանարդ մետր գերան ու 3 հազար խորանարդ մետր տախտակ և 30 տոննա մեխ, դրանք կոլխոզներին մատակարարելով 1941 թվականի երկրորդ ու երրորդ եռամսյակների ընթացքում։

Պարտավորեցնել ՍՍՌՄ Անտառի ժողկոմատին և Ցենտրոսոյուզին՝ կոլխոզներին վաճառելու համար շերամաբուծական շըրջանները փոխադրել հիշյալ շինանյութերը, հատկապես շերամաբուծարանների կառուցման նպատակով։

22. Պարտավորեցնել Գյուղատնտեսական բանկին՝ 1941 թվականին շերմաբուծարանների կառուցման համար կոլխոզներին բաց թողնել 9,0 միլիոն ռուբլի, և շերամաորդի աճեցման գործիքներ ձեռք բերելու համար՝ 5,5 միլիոն ռուբլի երկարատև վարկ, նաև ըստ գոյություն ունեցող նորմաների երկարատև վարկավորմամբ ապահովել թթենու ցանքերն ու տնկարանները։

23. Թթակեր շերամաորդի հում (կենդանի) բոժոժի մթերման միջին գինը սահմանել 10 ռուբլի 70 կոպ. և կաղնակեր շերամաորդինը՝ 18 ռուբլի յուրաքանչյուր կիլոգրամի համար, պարտավորեցնելով Տեքստիլ արդյունաբերության ժողկոմատին և ՍՍՌՄ Հողժողկոմատին՝ այդ գնի սահմաններում որոշել տոհմային ու արդյունաբերական, գարնանային ու երկրորդ աճի բոժոժի գինը, և ըստ խմբերի։

24. Սահմանել, որ այն կոլխոզներին, կոլխոզնիկներին և անհատական տնտեսություններին, որոնք գերակատարել են թթենակեր շերամաորդի բոժոժի կոնտրակտացիայի պլանը, պլանից ավելի հանձնված բոժոժի յուրաքանչյուր կիլոգրամի համար վճարվում է մրցանակ-հավելում, մթերման գնի հետևյալ չափով։

| Ա. Գարնանային շերամորդի բոժոժի համար<br>*Կոնտրակտացիայի պլանը՝ մեկ տուփ գրենայից* | Հանրային շերամաբուծությամբ զբաղվող կոլխոզներին | Անհատական շերամորդեր պահող կոլխոզնիկներին |
|---|---|---|
| *25-ից—35 կիլոգրամ* | 45 % | 20 % |
| *36-ից—40 »* | 60 % | 20 % |
| *41-ից—45 »* | 100 % | 60 % |
| *46-ից—50 »* | 175 % | 100 % |
| *51-ից—55 »* | 250 % | 175 % |
| *56-ից բարձր* | 300 % | 225 % |

| Բ. Երկրորդ կերակրման շերամորդի բոժոժի համար<br>*Կոնտրակտացիայի պլանը՝ մեկ տուփ գրենայից* | Հանրային շերամաբուծությամբ զբաղվող կոլխոզներին | Անհատական շերամորդեր պահող կոլխոզնիկներին |
|---|---|---|
| *20-ից—25 կիլոգրամ* | 40 % | 20 % |
| *26-ից—30 »* | 60 % | 40 % |
| *31-ից—35 »* | 100 % | 60 % |
| *36-ից—40 »* | 175 % | 100 % |
| *41-ից—45 »* | 250 % | 175 % |
| *46-ից բարձր* | 300 % | 225 % |

*Սահմանել, որ տեխնիկական պայմանների տեսակետից դեֆեկտավոր ճանաչված և «կարա-պաճախ» բոժոժի համար մրցանակ-հավելում չի վճարվում։*

*Պլանից ավելի հանձնված բոժոժի համար անհատական տնտեսություններին մրցանակ-հավելումներ վճարվում են կոլխոզների համար սահմանված նորմաների կեսով չափ։*

*25. Թթակեր և կաղնակեր շերամորդի բոժոժ հանձնող կոլխոզներին, կոլխոզնիկներին ու այլ հանձնողներին 1941 թվականին սպառկոոպերացիայի միջոցով մետաքսյա ու բամբակեղեն գործվածքների վաճառքը սահմանել նրանց կողմից հանձնված բոժոժի արժեքի հետևյալ չափերով.*

ա) կոլխոզներին, հանրային շերամաբուծության դեպքում—45 տոկոսի գումարով.

բ) կոլխոզնիկներին և այլ բոժոժ հանձնողներին՝ 30 տոկոսի գումարով։

26. Պարտավորեցնել Ուկրաինական ՍՍՌ Ժողկոմսովետին և Ուկր. Կ(բ)Պ Կենտկոմին, Բաշկիրական, Թաթարական, Չուվաշական, Կաբարդինո-Բալկարական, Դաղստանի, Չեչենո-Ինգուշական, Ղրիմի ԱՍՍՌ ժողկոմսովետներին և Համկ(բ)Պ մարզկոմներին, Վորոնեժի, Կուրսկի, Կույբիշևի, Սարատովի, Ստալինգրադի, Տամբովի և Ռոստովի մարզերի մարզգործկոմներին, և Համկ(բ)Պ մարզկոմներին, Կրասնոդարի, Օրջոնիկիձեի երկրգործկոմներին և Համ. Կ(բ)Պ երկրկոմներին՝ ապահովել կաղնակեր շերամաորդի ամեն կերպ զարգացումը կոլխոզներում։

Թաթարական ԱՍՍՌ Ժողկոմսովետին, Սարատովի և Տամբովի մարզգործկոմներին՝ 1941 թվականին ապահովել կաղնուանտառամասերի ամրացումը կոլխոզներին, կաղնակեր շերամաորդի աճեցման համար։

27. Բոժոժի կոնտրակտացիայի և մթերման տարեկան պլանները կատարած շրջանների համար սահմանել մասհանումներ տեղական բյուջեին, մթերած բոժոժի ընդհանուր արժեքի 2,5 տոկոսի չափով՝ ի հաշիվ բոժոժի մթերման վերադիր ծախսերի, հիշյալ մասհանումները ծախսել շրջգործկոմի հայեցողությամբ։

## III. ՍԵԼԵԿՑԻԱՅԻ, ՏՈՀՄԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԵՆԱՅԻ ՄԱՍԻՆ

28. Շերամաորդի նոր ցեղերի աճեցման և գոյություն ունեցող ցեղերի բարելավման ուղղությամբ սելեկցիոն աշխատանքներ կատարելու պարտականությունը դնել շերամաբուծության Միջին-ասիական ու Թբիլիսիի ինստիտուտների և շերամաբուծական զոնալ կայանների վրա, պարտավորեցնելով նրանց ամենամոտիկ տարիների ընթացքում բուծման համար աճեցնել նոր ցեղեր և բարձր մթերատու շերամաորդի հիբրիդային զուգակցումներ։

Շերամաբուծության գիտա-հետազոտական ինստիտուտներն ու կայանները ՍՍՌՄ Հողժողկոմատի սիստեմից հանձնել ՍՍՌՄ Տեքստիլ արդյունաբերության ժողկոմատին, առ 1-ն հունվարի 1941 թվականի բալանսով ու բոլոր կադրերով։

29. Շերամաորդի նոր, բարձր-մթերատու ցեղերի և թթենու բարձր-բերքատու սորտերի աճեցման աշխատանքները խրա-





A 19302

խուսելու նպատակով, հեղինակների համար սահմանել պրեմիաներ—շերամաորդի բարձր մթերատու մոնովոլտինային ցեղի աճեցման համար, որը բազմացված է առնվազն մինչև 2 հազար տուփ գրենա—10 հազար ռուբլի. բարձր մթերատու բիվոլտինային շերամաորդի համար, որը բազմացված է առնվազն մինչև 2 հազար տուփ գրենա—5 հազար ռուբլի, թթենու բարձր-բերքատու սորտի աճեցման համար, որը բազմացված լինի առնվազն 500 հեկտար տարածության վրա—10 հազար ռուբլի, սելեկցիոն աշխատանքի համար նախահաշիվներում նախատեսված միջոցների հաշվին:

30. 1941 թվականի հունվարի 1-ից սկսած, ՍՍՌՄ Ժողկոմսովետի և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1940 թվականի հունվարի 29-ի № 154 որոշումը տարածել շերամաբուծության ինստիտուտների, կայանների և հենակետների գիտական ու գիտա-տեխնիկական աշխատողների վրա, աշխատավարձի տեսակետից նրանց հավասարեցնելով սելեկցիոն փորձագիտական հաստատությունների աշխատողների հետ:

31. Հանձնարարել միութենական և ավտոնոմ ռեսպուբլիկաների Ժողկոմսովետներին՝ յուրաքանչյուր գրենա-գործարանի համար հատկացնել տոհմաբուծական շրջաններ, այն հաշվով, որ տոհմային շերամաորդերն ապահովված լինեն աճեցման անհրաժեշտ տարածությամբ, կերի ֆոնդով և որակյալ սպասարկմամբ:

32. Արգելել տնային եղանակով գրենա պատրաստելը (և նրանից շերամաորդեր աճեցնելը), որը շերամաորդի հիվանդությունների տարածման աղբյուր է հանդիսանում:

Տնային եղանակով գրենա պատրաստող և նրանից շերամաորդեր աճեցնող անձանց ենթարկել քրեական պատասխանատվության, իսկ հայտնաբերված շերամաորդերն ու գրենան ոչընչացնել:

33. ՍՍՌՄ Տեքստիլ արդյունաբերության ժողկոմատի վրա դնել թթաչեր ու կողնակեր շերամաորդի բուժժի կենտրոնակացման ու մթերումը, գրենայի (թրթուրների) արտադրությունն ու ռեալիզացիան, բուժժի նախնական մշակումը, շերամաորդի աճեցման հրահանգումը, վերահսկողությունը կոոպերատացիոն պայմանագրերի կատարման նկատմամբ և կոլխոզներին ու կոլխոզնիկներին շերամաորդի կերակրման համար անհրաժեշտ նյութեր մատակարարելը:

ՍՍՌ Միության Ժողովրդական Կոմիսարների Սովետը և

ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն կարևորագույն նշանակություն են տալիս շերամաբուծության հետագա զարգացմանը և պահանջում են ՍՍՌՄ Տեքստիլ արդյունաբերության ժողկոմատից, ՍՍՌՄ Հողժողկոմատից, տեղական սովետական ու պարտիական կազմակերպություններից՝ շերամաբուծությունը դուրս բերել ՍՍՌՄ գյուղատնտեսության առաջավոր ճյուղերի շարքը։

---

# «ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

## ՍՍՌՄ ժողկոմսովետի եվ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1941 թվականի մարտի 13-ի որոշումը կենսագործելու միջոցառումների մասին

**Հայկական ՍՍՌ ժողկոմսովետի եվ Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի 1941 թ. մարտի 19-ի որոշումը**

*«Շերամապահության հետագա զարգացման ձեռնարկումների մասին» ՍՍՌՄ Ժողկոմսովետի և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1941 թվականի մարտի 13-ի որոշման համապատասխան, Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետը և Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմը որոշում են.*

*1. Սահմանել Հայկական ՍՍՌ կոլխոզներում թթենու պարտադիր տնկման 1941—47 թ.թ. հետևյալ պետական պլանը.*

| ՇՐՋԱՆՆԵՐ | Թփային ցածրաբուն և բնային պլանտացիաներ (հեկտարներով) | | Բարձրաբուն, գծային և այլ ծառեր (հազար արմատներով) | |
|---|---|---|---|---|
| | Ընդամենը | Այդ թվում 1941 թ. | Ընդամենը | Այդ թվում 1941 թ. |
| Դուզքենդի | 24 | 10 | 50 | — |
| Աղինի | 12 | 10 | 25 | — |
| Սպիտակի | 30 | — | 50 | — |
| Կիրովականի | 42 | 10 | 75 | 5 |
| Ալավերդու | 76 | 5 | 150 | 25 |
| Արթիկի | 15 | — | 25 | — |
| Ստեփանավանի | 28 | 10 | 50 | 5 |
| Նոյեմբերյանի | 55 | 5 | 112 | 55 |
| Շամշադինի | 66 | 5 | 112 | 60 |
| Իջևանի | 50 | 5 | 105 | 30 |
| Դիլիջանի | 21 | 10 | 40 | — |

| ՇՐՋԱՆՆԵՐ | Թփային ցածրաբուն և բնային պլանտացիաներ (հեկտարներով) | | Բարձրաբուն, գծային և այլ ծառեր (հազար արմատներով) | |
|---|---|---|---|---|
| | Ընդամենը | Այդ թվում՝ 1941 թ. | Ընդամենը | Այդ թվում՝ 1941 թ. |
| Ղափանի | 165 | 10 | 355 | 100 |
| Գորիսի | 60 | 15 | 150 | 100 |
| Սիսիանի | 20 | 15 | 50 | 40 |
| Ազիզբեկովի | 45 | 10 | 100 | 5 |
| Միկոյանի | 112 | 5 | 225 | 5 |
| Կարաբաղլարի | 54 | 15 | 112 | 10 |
| Ախտայի | 30 | 10 | 60 | — |
| Ն. Բայազետի | 15 | — | 25 | — |
| Մարտունի | 18 | 15 | 40 | — |
| Բասարգեչարի | 65 | 25 | 125 | — |
| Կրասնոսելսկի | 15 | — | 25 | — |
| Վաղարշապատի | 143 | 20 | 285 | 70 |
| Հոկտեմբերյանի | 118 | 10 | 240 | 50 |
| Աշտարակի | 100 | 20 | 225 | 70 |
| Կոտայքի | 113 | 5 | 225 | 30 |
| Թալինի | 42 | — | 70 | — |
| Զանգիբասարի | 104 | 20 | 234 | 55 |
| Վեդու | 39 | 20 | 120 | 80 |
| Ղամարլուի | 127 | 30 | 285 | 80 |
| Բերիայի անվան | 52 | 25 | 135 | 60 |
| Մեղրու | 44 | 10 | 120 | 65 |
| Ընդամենը | 1900 | 350 | 4000 | 1000 |

*2. Հայկական ՍՍՌ-ում 1941—1947 թ.թ. ժամանակաշրջանի համար սահմանել թթենու տնկման միջին նորմա.*

*ա) Ալավերդու, Նոյեմբերյանի, Շամշադինի, Իջևանի, Ղափանի, Գորիսի, Միկոյանի, Կարաբաղլարի, Վաղարշապատի, Հոկտեմբերյանի, Աշտարակի, Կոտայքի, Զանգիբասարի, Վեդու, Ղամարլուի, Բերիայի անվան և Մեղրու շրջանների կոլխոզներում՝ թփային ցածրաբուն ու բնային պլանտացիաներ 4 հեկտար և բարձրաբուն գծային և այլ ծառեր—7,5 հազար արմատ.*

բ) Դուզքենդի, Աղինի, Արթիկի, Սպիտակի, Ստեփանավանի, Դիլիջանի, Սևանի, Ազիզբեկովի, Ախտայի, Ն. Բայազետի, Մարտունու, Բասարգեչարի, Կրասնոսելսկի և Թալինի շրջանների կոլխոզներում՝ թփային ցածրաբուն ու բնային պլանտացիաներ—3 հեկտար, իսկ բարձրաբուն գծային և այլ ծառեր—5 հազար արմատ։

3. Թթենու պարտադիր տնկման պետական պլանից ազատել Ամասիայի, Ղուկասյանի, Կալինինոյի, Ալագյազի և Ապարանի շրջանների բոլոր կոլխոզները, որոնք հողային-կլիմայական պայմանների և ոռոգման ջրի բացակայության պատճառով չեն կարող զբաղվել թթաբուծությամբ։

4. Հանձնարարել Հայկական ՍՍՌ Հողժողկոմատին՝ հնգօրյա ժամկետում Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի քննարկմանը ներկայացնել մնացած շրջանների բարձրլեռնային կոլխոզների, ինչպես նաև ջրովի հողեր չունեցող այն առանձին կոլխոզների ցանկը, որոնք պետք է ազատվեն թթենու պարտադիր տնկումից։

5. Առաջարկել շրջսովետների գործկոմներին, պարտիայի շրջկոմներին և շրջհողբաժինների վարիչներին,—այն կոլխոզների վերաբերմամբ, որոնք 1938—1940 թ.թ. ժամանակաշրջանում տնկել են թթենու թփային, ցածրաբուն ու բնային պլանտացիաներ և ապահովել են նրանց լիակատար պահպանումն ու պատշաճ խնամքը, արդեն տնկված պլանտացիաները հաշվի առնել թթենու պլանտացիաների պարտադիր տնկման ասպարեզում նրանց համար սահմանված նորմաների հաշվին։

6. Թույլատրել շրջսովետների գործկոմներին՝ թթենու պարտադիր տնկման նորմաները դիֆերենցիացիայի ենթարկել ըստ շրջանի կոլխոզների, հաշվի առնելով նրանց հողային տարածությունները և գյուղատնտեսության ուղղությունը, անպայման պահպանելով շրջանային միջին նորմաները։

7. Առաջարկել շրջսովետների գործկոմներին և պարտիայի շրջկոմներին՝ երկու շաբաթվա ընթացքում կոլխոզներին հասցնել թթենու պարտադիր տնկման դիֆերենցիացիայի ենթարկված նորմաները, ինչպես նաև թթենու տնկման 1941—47 թ. թ. պետական պլանը։

8. Առաջարկել Հայկական ՍՍՌ Սննդարդյունաբերության ժողկոմատին, Խճուղային ճանապարհների վարչությանը, Երևանի ու Լենինականի քաղսովետների գործկոմներին և շրջսովետների գործկոմներին՝ տասնօրյա ժամկետում մշակել թթենու տնկման 1941—1942 թվականի պլանները քաղաքների, ավանների, սովխոզների, ճանապարհների, մագիստրալային ջրանցքների կանաչապատման համար և ներկայացնել Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի քննարկմանը։

9. Սահմանել 1941—42 թ. թ. Հայկական ՍՍՌ կոլխոզներում անտառատնկման աշխատանքների հետևյալ պլանը՝

| Թվականներ | Դաշտապաշտպան շերտերի անտառատնկում (հեկտարներով) | Ձորերի անտառապատում |
|---|---|---|
| 1941 թ. | 200 | 130 |
| 1942 թ. | 300 | 150 |

Հայկական ՍՍՌ Հողժողկոմատին՝ հնգօրյա ժամկետում անտառատնկման աշխատանքների պլանն ուղարկել շրջաններին։

10. Առաջարկել շրջսովետների գործկոմներին և պարտիայի շրջկոմներին՝ անտառատնկման ընդհանուր պլանի 20 տոկոսը տնկել թթենիներ։

11. Առաջարկել «Ագրոլեսսեմ»-ի Հայաստանի գրասենյակին՝ անտառատնկումն ապահովել համապատասխան քանակությամբ թթենու տունկերով։

12. Սահմանել, որ Վաղարշապատի պետական տնկարանում 1941—42 թ. թ. և ամեն տարի պետք է կատարվի երկու հեկտար թթենու ցանք և հիմնվի 10 հեկտար տնկարան։

13. Սահմանել կոլխոզային տնկարաններում թթենու տնկիներ և սերմնաբույսեր աճեցնելու 1941—42 թ. թ. պլանը, հետևյալ չափերով.

| ՇՐՋԱՆՆԵՐ | Գյուղերի—կոլխոզների անունը | 1941 թ. | | 1942 թ. | |
|---|---|---|---|---|---|
| | | Թթենու սերմի ցանքը (հեկտ.) | Տնկիների տնկումը (հեկտ.) | Թթենու սերմի ցանքը (հեկտ.) | Տնկիների տնկումը (հեկտ.) |
| Բերիայի անվ. | Նորագավիթ | 4 | 12 | 4 | 12 |
| Ղամարլու | Բեջազլու | 2 | 5 | 2 | 5 |
| Ղամարլու | Զիգդամլու | 2 | 5 | 2 | 5 |
| Ղամարլու | Դարղալու | — | 4 | — | 4 |
| Իջևան | Ուզունթալա | 2 | 4 | 2 | 4 |
| Ալավերդի | Շնող | 1 | 2 | 1 | 2 |
| Գորիս | Գորիս | 2,5 | 8 | 2,5 | 8 |
| Մարտունի | Գյոզալդարա | 2,5 | 5 | 2,5 | 5 |
| | Ընդամենը՝ | 16 | 45 | 16 | 45 |

14. Առաջարկել Հայկական ՍՍՌ Հողժողկոմատին՝ Վաղարշապատի պետական տնկարանի տարածությունը հասցնել մինչև 40 հեկտարի։

15. Առաջարկել Հայկական ՍՍՌ Հողժողկոմատին, շրջսովետների գործկոմներին և պարտիայի շրջկոմներին՝ իրենց հատուկ հսկողության տակ վերցնել կոլխոզային մշտական թթատնկարանները և հիշյալ տնկարաններում բոլոր ագրո-տեխնիկական ձեռնարկումների ժամանակին կիրառումը, նպատակ ունենալով ապահովել ստանդարտ տունկերի ստացումը՝ թթենու ցանքի յուրաքանչյուր հեկտարից—300 հազար սերմաբույս և տնկանոցի յուրաքանչյուր հեկտարից պատվաստած 20 հազար, չպատվաստած—20 հազար տունկ։

16. Առաջարկել Հայկական ՍՍՌ Հողժողկոմատին՝ 1941 թվականի ընթացքում կոլխոզնիկներից պատրաստել 230 թթաբույծ և շերամապահ։

17. Առաջարկել «Ագրոլեսսնաբ»-ի Հայաստանի գրասենյակին՝ 1942 թվականի ցանքի համար հայթայթել 300 կիլոգրամ թթենու սերմ։

18. Պարտավորեցնել Հայկական ՍՍՌ Հողժողկոմատին՝ 1941—42 թվականի ընթացքում բոլոր մշտական կոլխոզային թթատնկարաններում առանձնացնել 1-ից մինչև 2 հեկտար հողամաս մայրատունկերի տնկման համար, թթենու լավագույն սորտերի պատվաստաճյուղեր և սերմ ստանալու նպատակով։

19. Հանձնարարել շերամապահությամբ զբաղվող կոլխոզնե-

*ջին՝ 1941—42 թ. թ. ընթացքում յուրաքանչյուր կոլխոզում կառուցել 1—2 ջերմանոց։*

*20. 1941 թվականի համար սահմանել ջերմանոցների կառուցման պլանը, թվով 47 օբեկտ, որից՝*

| | |
|---|---|
| *Մեղրու շրջանում—9* | *Ալավերդու շրջանում—2* |
| *Ղափանի շրջանում—3* | *Վաղարշապատի շրջանում—2* |
| *Բերիայի անվան շրջանում—3* | *Վեդու շրջանում—2* |
| *Իջևանի շրջանում—2* | *Միկոյանի շրջանում—3* |
| *Շամշադինի շրջանում—2* | *Հոկտեմբերյանի շրջանում—2* |
| *Աշտարակի շրջանում—3* | *Կոտայքի շրջանում—2* |
| *Ղամարլուի շրջանում—4* | *Գորիսի շրջանում—4* |
| *Նոյեմբերյանի շրջանում—2* | *Երևան քաղաքում—2* |

*Կարևորագույն նշանակություն տալով ջերմապահության հետագա զարգացմանը, Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետը և ՀԿ(բ)Պ Կենտկոմը պահանջում են շրջանային սովետական, պարտիական ու հողային օրգաններից՝ լուրջ ուշադրություն նվիրել ջերմապահության զարգացմանը և լրիվ ապահովել սահմանված պլանների կատարումը։*

Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի Նախագահ՝
Ա. ՓԻՐՈՒԶՅԱՆ

ՀԿ(բ)Պ Կենտկոմի Քարտուղար՝
ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Համայնական շերամապահությունը, ինչպես կոլխոզային տնտեսության այլ կուլտուրաները, մտցվում է կոլխոզների արտադրական պլանների մեջ։

Կոլխոզային արտադրական պլանները կազմելիս անհրաժեշտ է պլանավորել թթագործական և շերամապահական հետևյալ աշխատանքները.

1. Թթագործության և շերամապահության նյութական և ինվենտարի պահանջը ու նրանց ձեռք բերելու ժամկետները։

2. Կերակրման չափը, մեկ տուփ գրենայի բերքը, բոժոժի ընդհանուր մթերումը ըստ առանձին օղակների և բրիգադաների, ասկայն բոժոժի միջին բերքատվությունը, ըստ առանձին շերամապահական օղակների, դիֆերենցիացիայի ենթարկելը պարտադիր չէ։

3. Շենքերի օգտագործումն ըստ որդի հասակների, ցույց տալով նրանց չափը, մակերեսը, դարակների հարկերի քանակը, կերակրման տարածության չափը և այլն։

4. Շենքերի պատրաստման և կահավորման ժամկետները, ինչպես ինկուբացիայի նույնպես և որդերի կերակրման համար։

5. Թթենու պլանտացիաների և բարձրաբուն ծառերի նոր տնկումների չափը։

Կուլտուրական սորտերով թթենու գարնան և ամռան պատվաստումը։

Բնավոր ծառերի փոխպատվաստումը՝ բազմաբունցք պսակի։

Ծերացած թթենիների երիտասարդացումը։

Բնավոր ծառերի բների մաքրումը գարնան, աշնան և ամռան ժամանակաշրջանում։

Բնավոր ծառերի բների շուրջը փխրեցնելը վաղ գարնան և ուշ աշնանը։ Կուլտուրական թթենիների կորոնների պատրաստումը։

6. Թթագործության և շերամապահության համար մշտա-

կան և սեզոնային բանուժի պահանջը, ցույց տալով նրանց աշխատանքներում ներգրավելու մոտավոր ժամկետը։

Այն կոլխոզները, որոնք զբաղվում են թթենու տնկանյութի աճեցման գործով անհրաժեշտ է պլանավորել՝

ա) Ցանքի միամյա և երկամյա տնկիների տարածությունը, թթենու կուլտուրական սորտերով պատվաստելու չափը, բուսակների և պատվաստած ու ոչ պատվաստած տնկիների ելույթը մեկ հեկտարից։

բ) Ամբողջ տարածությունից ստացվելիք բուսակների պատվաստած և ոչ պատվաստած տնկիների ընդհանուր ելույթը։

գ) Պարարտացման չափը։

դ) Մշտական և սեզոնային բանուժի պահանջը և նրանց աշխատանքներում ներգրավելու ժամկետները։

## ՈՐԴԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

**Շենքերի ու ինվենտարի նախապատրաստումը**

Շերամի որդի հանրային կերակրումների թե փոքր և թե մեծ հասակների համար օգտագործվում են կոլխոզային հանրային շենքերը — կուլտուրական դոմերը, պահեստները, ակումբները և այլ շենքերը, որոնք պիտանի կլինեն կերակրումների համար, նաև կոլխոզնիկների շենքերը պայմանագրական սկզբունքով։

Գրենայի արթնացման և որդերի կերակրման համար առանձնացված շենքերը անհրաժեշտ է լավ մաքրել կեղտից և փոշուց, ազատել կողմնակի առարկաներից ու ախտահանել 4 տոկոսանոց ֆորմալինի լուծույթով, ապա որից հետո միայն օգտագործել որդի կերակրման համար։

Դեզինֆեկցիայից առաջ անհրաժեշտ է ամուր փակել շենքի պատուհանները, ճեղքերը և այլ անցքերը։

Գրենայի արթնացման և որդերի կերակրման ինվենտարը, պետք է նախօրոք մաքրել կեղտից, լվանալ տաք ջրով ու արևի անմիջական ճառագայթների տակ չորացնել, որից հետո տեղափոխել շենքի ներսը ու շենքի հետ միասին ախտահանել։

Մինչ դեզինֆեկցիան հարկավոր է դոմերի հատակի հողը 5—10 սանտիմետր հաստության շերտով վերցնել, շենքից դուրս տանել, իսկ հատակը հարթեցնել։

Ինկուբատորիան պետք է պատրաստ լինի գրենան ինկուբացիան դնելուց 10 օր առաջ, իսկ շերամասները՝ կերակրման նախօրյակին։

Ճերմատներն ավելի ռացիոնալ օգտագործելու նպատակով անհրաժեշտ է շենքերը կահավորել բազմահարկ դարակներով։

Որդերի մեծ հասակների կերակրման դարակների միջին տարածությունը պետք է լինի 80—100 սմ., փոքր հասակների համար՝ 50—60 սմ.։

Մեկ տուփ գրենայից ստացած որդերի կերակրման համար պահանջվում է հետևյալ կերակրման տարածությունը.

Որդերի փոքր հասակներում, երրորդ հասակի վերջին շրջանում՝ 12 քառ. մետր, 5-րդ և հյուսման շրջանում՝ 50—60 քառ. մետր։

Առաջին երեք հասակներում պահանջվում է որդերին տաք պահել՝ 23—24 աստիճան, ուստի և ճերմատները պետք է տաքացնել վառարաններով։

**Գրենայի ինկուբացիան**

Հանրային կերակրումների համար գրենան արթնացվում է պետական կամ կոլխոզային ինկուբատորիաներում։

Գրենան պետք է արթնացնել հրահանգով նախատեսված տեխնիկական կանոններով, հատուկ ուշադրություն դարձնելով որդերի կչման տեխնիկայի ճիշտ կիրառման վրա։

Հետագայում, որդերը ճերմատնում ճիշտ դասավորելու համար, տվյալ պարտիայի գրենայից մեկ օրվա դուրս եկած ու կշռված որդերը պետք է միացնել և կազմել խոշորացված պարտիաներ, նայած ճերմատան ծավալին ու օղակի կարողությանը, տալով մեկ օղակին օրվա դուրս եկած և մեկ պարտիայի գրենայի որդեր։

**Որդի կերակրումը փոքր հասակներում**

Որդերի առաջին երեք հասակները կերակրելու համար յուրաքանչյուր օղակին ամրացվում է մեկ շենք, որն ունենալու է տաքացնելու հարմարություններ։

Որպեսզի հետագայում, որդերի հյուսման ժամանակ, խուսափել խառնաշփոթությունից և բանուժի ավելորդ ծախսումից, անհրաժեշտ է ինկուբացիայից ստացած յուրաքանչյուր պարտիա որդերը (մեկ, կամ մոտ մեկ տուփ) դասավորել դարակների վրա և կերակրել առանձին, տրամադրելով յուրաքանչյուր տուփի համար 12 քառ. մետր կերակրման տարածություն։

Որդերի նորայման գործը հեշտացնելու համար, նրանց պետք է դասավորել հատկացված դարակի մեջտեղում և ըստ հասակի կատարել նորացում, դասավորելով ամբողջ տարածության վրա։

**Որդերի տեղափոխումը մեծ հասակներում**

Երրորդ քնից արթնանալուց երկու օր հետո որդերին պետք է տեղափոխել շերամապահական օղակներին ամրացված մեծ հասակների կերակրման համար հատկացված շենքերը։ Որդերի տեղափոխումը կատարվում է օրվա հով ժամերին՝ առավոտյան և երեկոյան։

Որդերը ճիշտ և համաչափ տեղավորելու համար, նախօրոք չափվում է շերամատան դարակների մակերեսը և դրա համաձայն որոշվում յուրաքանչյուր դարակի վրա տեղավորվող որդերի քանակը։ Որդերի փոքր հասակներում, յուրաքանչյուր տուփի առանձին կերակրելը հնարավորություն է տալիս ճիշտ և համաչափ տեղափոխելու նրանց՝ մեծ հասակներում, նրա համար առանձնացված շերամատներում։

Ինչպես որդերի փոքր, նույնպես և մեծ հասակներում, որդերին անհրաժեշտ է դասավորել դարակի մեջտեղի մասերում նրա համար, որպեսզի ըստ նրանց զարգացման, երբ պահանջվում է ավելի ու ավելի կերակրման տարածություն, հնարավոր լինի առանց դժվարությունների որդերին նոսրացնել դարակի այս ու այն կողմը։

Շերամատանում պետք է թողնել ազատ տարածություն (մեկ տուփի համար ոչ ավելի, քան 2 քառ. մետր)—բաժաժ հյուսելու ժամանակ հետամնաց որդերին կերակրելու համար։

**Տերևի պահանջը**

Բարձր և լավ որակի բերք ստանալու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր մեկ տուփ (25 գրամ գրենայի) որդերին տալ հետևյալ քանակությամբ թթենու տերև (կիլոգրամներով)։

| Որդերի հասակները | Բաղդադ ցեղին | Դեղին ցեղին | Բիվոլտին ցեղին | Մոնովոլտին ցեղերի հիբրիդ կոմբինացիաններին։ | Բիվոլտին և մոնովոլտին ցեղերի հիբրիդ կոմբինացիաններին |
|---|---|---|---|---|---|
| 1-ին | 6 | 4 | 4 | 5 | 5 |
| 2-րդ | 17 | 11 | 10 | 15 | 12 |
| 3-րդ | 57 | 36 | 26 | 45 | 40 |
| 4-րդ | 170 | 108 | 80 | 140 | 113 |
| 5-րդ | 750 | 621 | 480 | 645 | 630 |
| Ընդամենը | 1000 | 780 | 600 | 850 | 800 |

Շերամի որդերին մեծ հասակներում ճիշտ և իր ժամանակին կերակրելու համար, անհրաժեշտ է կերակրման յուրաքանչյուր օրվա համար նախօրոք կազմել թթենու տերևի պահանջի օրինակելի հաշվումը: Այդ կատարվում է թթենու ճյուղերի խրձերով, որոնք ունենում են մոտավորապես 15 կիլոգրամ քաշ:

Կերակրման ընթացքում անհրաժեշտ է կերի պատրաստումը կարգավորել այն հաշվով, որպեսզի կերակրման ամբողջ ժամանակաշրջանում որդերն ունենան բավարար քանակությամբ կեր:

**Կերի պատրաստումը և պահպանումը**

Որդերի առաջին երեք հասակների կերակրման շրջանում թթենու տերևը պետք է պատրաստել օրական ոչ պակաս 4 անգամ, 4-րդ և 5-րդ հասակներում ոչ պակաս, քան 2 անգամ:

Տերևի պատրաստումը պետք է կատարել օրվա հով ժամերին:

Առաջին երկու հասակների որդերին կերակրելու համար կտրտվում են բնի ու արմատավզի մասերում դուրս եկած ճյուղերը, 4-րդ և 5-րդ հասակների համար կտրվում են բոլոր ճյուղերն ու ոստերը:

Որդերի կերակրման համար թթենու կուլտուրական սորտերը (պատվաստները) օգտագործվում են միայն որդերի 5-րդ հասակում:

Թթենու ճյուղերը կտրելու համար անհրաժեշտ է գործածել սեկատորներ և այգեգործական սղոցներ:

Տերևը պետք է տեղափոխել օրվա հով ժամերին՝ արևի ճառագայթներից պաշտպանելու համար, պետք է ծածկել ծածկոցով և մինչև որդերին տալը պահպանել մաքուր ու հով տեղում:

**Որդերի կերակրումը**

Պահանջված քանակությամբ տերևով որդերին ապահովելու հետ միասին, անհրաժեշտ է պահպանել նաև կերակրման ճիշտ ռեժիմը:

Օրվա ընթացքում որդերին պետք է կեր տալ համաչափ, ոչ մեծ բաժիններով: Նպատակահարմար է որդերին կերակրել օրական ոչ պակաս քան՝

Առաջին երկու հասակներում՝ ցերեկը յուրաքանչյուր 2 ժամը մեկ անգամ, իսկ գիշերը՝ ոչ պակաս 2 անգամից:

Երրորդ հասակում—8 անգամ:

Չորրորդ հասակում—6—7 անգամ:

Հինգերորդ հասակում—5—6 անգամ:

Գիշերը բոլոր հասակներում ոչ պակաս 2 անգամից:

Արգելվում է որդերին կերակրել չոր, թառամած և կեղտոտ տերևով:

Կերը որդերին պետք է տալ հետևյալ ձևով.

Առաջին հասակում՝ կտրված կամ ամբողջական տերև:

Երկրորդ հասակում՝ ամբողջական տերևներ:

Երրորդ հասակում՝ փոքր ոստերով:

Չորրորդ և հինգերորդ հասակներում՝ ամբողջական ճյուղեր:

**Սնուցման տարածությունը**

Կերակրման յուրաքանչյուր շրջանում շերամի որդերին տրվում է նորմալ տարածություն: Մեկ տուփ (25 գրամ) որդին, ըստ հասակների, պետք է հատկացնել՝

| Որդի հասակը | Ցեղացու կերակրում | Արդյունաբեր. կերակր. |
|---|---|---|
| 1-ին | 5 քառ. մետր | 2 քառ. մետր |
| 2-րդ | 10 » » | 6 » » |
| 3-րդ | 20 » » | 12 » » |
| 4-րդ | 40 » » | 25 » » |
| 5-րդ | 60—70 » | 50 » » |
| Հյուսում | | |

**Ջերմության և խոնավության կարգավորումը շերամանոցում**

Որդի նորմալ զարգացման համար անհրաժեշտ է շերամատներում պահպանել ջերմությունը 22—24 աստիճանի սահմաններում և օդի հարաբերական խոնավությունը՝ 70—75 տոկոս: Բոժոժի հյուսման շրջանում ջերմությունը պետք է իջեցվի մինչև 20—22 աստիճանի, իսկ խոնավությունը՝ 60—70 տոկոս: Որդերի փոքր հասակների համար ջերմությունն ու խոնավությունը կարգավորվում է՝ վառարաններ վառելով, օդափոխությամբ, արհեստական խոնավությամբ (թրջված սավանների միջոցով):

Որդերի վերջին հասակներում, եթե դրսի ջերմությունը բարձր է, իսկ շերամատան ջերմությունը նորմայից ցածր է, օրվա տաք ժամերին կարելի է դռները, լուսամուտները բաց անել, որպեսզի դրսի բարձր ջերմությունը ներս թափանցի:

**Խշտիների փոխումը**

Առաջին հասակում որդերի տակի խշտինները չպետք է փոխել. երկրորդ, երրորդ և չորրորդ հասակներում խշտին պետք է փոխել մեկ անգամ, այն էլ քնից արթնանալու երրորդ օրը. հինգերորդ հասակում խշտին փոխվում է 2 անգամ, որից առաջին անգամը քնից արթնանալու 2-րդ օրը, իսկ մյուսը՝ հասակի միջին շրջանում։

Որդերի տեղափոխումը կատարվում է սիտճիկներով (ծակ թուղթ) կամ տերևներով՝ որդի փոքր հասակներում և ճյուղերով՝ որդի մեծ հասակներում։ Տերամատունը միշտ պետք է պահել մաքուր դրությամբ։ Անհրաժեշտ է խշտիների յուրաքանչյուր փոխման ժամանակ խշտինները լավ մաքրել, որպեսզի նրանց մեջ որդ չմնա, աղբը դուրս տանել և հեռու թափել շերամատնից։

**Բոժոժավլենների հավաքումը, պատրաստումը և դասավորումը**

Բոժոժ հյուսելու համար օգտագործվում են չոր բոժոժավլեններ։ Նկատի ունենալով դրանց մեծ պահանջը, ինչպես նաև նրանց ժամանակին չորացնելու ու պատրաստելու անհրաժեշտությունը, նրանց հավաքելը պետք է կատարել ոչ ուշ, քան որդերի 4-րդ հասակի վերջում։

Բոժոժավլենների դասավորման ժամանակ ոչ մի դեպքում չի թույլատրվում որդերի փչացում։
Մնացած որդերին ու կերակրել նրանց։

Հետ մնացած որդերի հավաքելը կատարվում է մասսայական ցախ բարձրանալուց 4 օր հետո։

**Պայքար վնասատուների դեմ**

Որդի կերակրման և բոժոժի հյուսման ողջ ժամանակաշրջանում անհրաժեշտ է պայքարել հիվանդությունների դեմ, համաձայն հրահանգի և շերամահրահանգչի ցուցմունքների։ Հիվանդություններ երևալու դեպքում անմիջապես պետք է դիմել մասնագետին։

**Բոժոժի հավաքը և հանձնումը մթերակայաններին**

Արդյունաբերական կերակրումների բոժոժները պետք է հավաքել որդի մասսայական ցախ բարձրանալուց ոչ շուտ, քան 8-րդ օրը և ոչ ուշ, քան 9-րդ օրը, իսկ ցեղացու կերակրումները 9-րդ օրը, սակայն յուրաքանչյուր դեպքում ղեկավարվել շերամ-հրահանգչի ցուցումներով։

Բոժոժները հավաքելուց հետո պետք է լավ մաքրել բամբակից, և ջոկել սև չխարը նորմալ բոժոժից։

Բոժոժը մթերակայան պետք է տեղափոխել հավաքման օրը, անպայմանորեն ամուր տարաներում (կողով) օրվա հով ժամերին։ Բամբակը նույնպես պետք է մաքրել աղբից և բոժոժի հետ միասին հանձնել։

**Ամռանը և աշնանը կերակրումների առանձնահատկությունները**

Ամռան և աշնան կերակրումների համար պետք է օգտագործել հատուկ կազմակերպված կերի բազա, սակայն այդպիսիների բացակայելու դեպքում որդերի առաջին երկու հասակներում կերակրման համար օգտագործվում են թթենու բների վրա դուրս եկած շիվերը։ Որդերի մեծ հասակներում օգտագործվում է թե՛ բների վրա դուրս եկած շիվերը և թե՛ գարնան կերակրումների ժամանակ չօգտագործված ծառերի ճյուղերը։ Հիշյալ կերը չբավարարելու դեպքում, թույլատրվում է օգտագործել բնավոր ծառերի պսակի հիմնական շիվերը (մաքրման կարգով) այն էլ 10 տոկոսի սահմաններում։

Կերի պատրաստումը և տեղափոխումը պետք է կատարել առավոտյան և երեկոյան հով ժամերին։ Տերևը պետք է պահել հով տեղ, թաց ծածկոցների տակ։

Այդ կերակրումներին պետք է տրամադրել կապիտալ շենքեր, ըստ հնարավորության ջրից մոտիկ վայրերում։

Ամբողջ կերակրման շրջանում կերը տրվում է առաջին երեք հասակներում 2 ժամը մեկ անգամ, վերջին հասակներում — 3 ժամը մեկ անգամ։

Որդերի 4-րդ և 5-րդ հասակներում կարելի է կերակրել խոնավացրած տերևներով, սկսելով այդ յուրաքանչյուր հասակի 2-րդ օրվանից։

Բարձր ջերմության և ցածր խոնավության դեպքում կարելի է խոնավացրած տերևով կերակրել նաև որդերի 3-րդ հասակի միջին շրջանից։

Խոնավացրած տերևով կերակրելու ժամանակ շերամատունը պետք է հաճախակի օդափոխվել։

Բոժոժի հյուսման շրջանում արգելվում է խոնավացրած տերևով կերակրելը։

Շերամատան ջերմությունը իջեցնելու և խոնավությունը բարձրացնելու համար՝ բավական է ջրել շերամատան հատակը, լուսամուտներին—դռներին թրջած սավաններ կախել։

Թթենու կուլտուրական սորտեր ունենալու դեպքում որդերի 4-րդ և 5-րդ հասակների 2-րդ օրվանից կարելի է կերակրել այդ սորտերով։

## ԹԹԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ

Ագրոտեխնիկական միջոցառումները կապված կերի բազայի ընդարձակման, թթենու բնավոր ծառերի և պլանտացիաների խնամքի և բարելավման, ինչպես նաև տնկանյութի աճեցումը կատարվում է Հայկ. ՍՍՌ. Հողժողկոմատի կողմից իջեցված ագրոկանոնների համաձայն։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Թթենու ծառերի խնամքի ու շերամի որդերի կերակըրման աշխատանքները կատարելու համար կոլխոզներում կազմակերպվում է շերամապահական մշտական բրիգադա, որի պարտականությունների մեջ է մտնում հետևյալ աշխատանքները՝

ա) թթենու նոր տնկումները.

բ) օգտագործվող և նոր տնկված թթենիների խնամքը.

գ) հին կերի բազայի բարելավումը—ձևավորում, բերքատու սորտերի փոխադրում և երիտասարդացումը.

դ) շերամատների նախապատրաստումը.

ե) որդերի գարնան-ամռան-աշնան կերակրումների կազմակերպումը։

Յուրաքանչյուր կոլխոզում կազմակերպվում է մեկ կամ մի քանի (ըստ պահանջի և անհրաժեշտության) բրիգադաներ, որոնք կոմպլեկտավորվում են շերամապահական և թթագործական լավագույն մասնագետ կադրերով։

Շերամապահական բրիգադային ամրացվում է թթենու բոլոր տարածությունները, կերի, բոժոժի, բոժոժավեկների տեղափոխման համար տրանսպորտ և քաշող ուժ, որդերի հանրային կերակրումների համար շենքերը, շերամապահական ու թթագործական հատուկ ինվենտարը։

Մշտական շերամապահական բրիգադայի կազմի մեջ կոլխոզնիկների քանակը որոշվում է թթագործության և շերամապահության աշխատանքների ծավալով, այն հաշվով, որ կոլխոզնիկներն ամբողջ սեզոնում ծանրաբեռնված լինեն աշխատանքով։

Շերամապահական բրիգադայի մշտական կազմը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր մեկ հեկտար թփաձև և կոմբինացված պլանտացիայի, յուրաքանչյուր 1000 բնավոր թթենու յուրաքանչյուր 5 տուփի հանրային կերակրումների համար առանձացնել մեկական մարդ։

Դիմազրկությունից խուսափելու և նախատեսված թթագործական և բոժոժի մթերման պլանները կատարելու պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով, մշտական շերամապահական բրիգադաների անդամներին պետք է բաժանել ըստ օղակների։

Գարնան կերակրումների նախապատրաստական աշխատանքների անցկացման շրջանում անհրաժեշտ է յուրաքանչյուր 5 տուփ արդյունաբերական և 3 տուփ ցեղացու կերակրումների համար կազմակերպել մեկ շերամապահական օղակ։

Շերամապահական օղակներում անպայման պետք է առանձնացնել կեր պատրաստողներ, որոնք պարտավոր են որդերի մեծ հասակներում ապահովել թթենու տերևի լրիվ պահանջը՝ ցերեկային, երեկոյան, գիշերային և առավոտյան կերակրումների համար։ Աշխատանքից ազատ ժամանակ, ընդմիջումների ժամին մասնակցում են նաև կերակրման այլ աշխատանքներին, օգնում են մյուս օղակներին և այլն։

Պատրաստած կերը ժամանակին շերամատները տեղափոխելու համար, յուրաքանչյուր 2—3 օղակների համար առանձնացվում է մեկ հոգի կեր փոխադրող, որը շերամապահական օղակի մեջ չի մտնում։

Թթագործական և կերակրման բոլոր աշխատանքները ժամանակին կատարելու համար շերամապահական օղակը, ըստ պահանջի, լրացվում է ժամանակավոր բանուժով կոլխոզի այլ արտադրական բրիգադաների բանուժի հաշվին։ Այդ աշխատանքների համար ներգրավվում են թթագործության և շերամապահության գործին տիրապետող կոլխոզնիկները, որոնք բաշխվում են կազմակերպված օղակների մեջ։

Թթենիների խնամքի ու որդերի կերակրման համար ժամանակավոր բանուժի ճիշտ պահանջը որոշելու նպատակով, յուրաքանչյուր օղակի ու ամբողջ բրիգադայի համար կազմվում է ժամանակավոր բանուժի պահանջի օրինակելի պլան (գրաֆիկ)։

Շերամապահական բրիգադայի հիմնական անդամներն իրենց անմիջական աշխատանքների ազատ ժամանակ մասնակցում են կոլխոզի այլ արտադրական բրիգադաների աշխատանքներին։

Այն կոլխոզներում, որտեղ կազմակերպված են ոչ մեծ չափերի տնկարանային տնտեսություն, մշտական շերամապահական բրիգադաներից առանձնացվում են մշտական օղակ թթենու բու-

*տակների և տնկիների անհրաժեշտ խնամքի աշխատանքները կատարելու համար։*

*Օղակի աշխատանքները ղեկավարում է ջերմատնտեսական բրիգադայի բրիգադավարը։*

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

*Թթենիների խնամքի ու հանրային կերակրումների բոլոր աշխատանքները ղեկավարելու համար կոլխոզի վարչությունը լավագույն շերամապահներից առանձնացնում է կազմակերպական ընդունակություններ ունեցող բրիգադավար։*

*Այն կոլխոզներում, որտեղ կերակրման չափը 50—60 տուփից ավելին է, կերակրման ընթացքում բրիգադավարին օգնելու համար, լավագույն շերամապահներից առանձնացվում է օգնական— յուրաքանչյուր 40—50 տուփի համար մեկ հոգի։*

*Օգնականներն ամրացվում են որոշ շերամապահական օղակներին, որոնք պարտավոր են ապահովելու որդերի կերակրման ագրոկանոնների ճիշտ և ժամանակին կիրառումը։*

*Յուրաքանչյուր օղակի համար առանձնացվում է օղակավար, առաջին հերթին բրիգադայի հիմնական անդամների թվից, օղակի աշխատանքները ղեկավարելու համար։*

*Օղակավարի պարտականությունների մեջ են մտնում օղակի կերակրումների ընդհանուր ղեկավարությունը և բանուժի ճիշտ դասավորումը, բացի դրանից օղակավարներն օղակի այլ անդամների հետ հավասար մասնակցում են որդի կերակրման աշխատանքներին։*

*Առաջին հասակներում բոլոր 5 տուփ որդերը կերակրվում են անմիջապես օղակավարների միջոցով։*

*Հետագա հասակներում որդերին կերակրելու համար օղակին առանձնացվում է հավելյալ բանուժ։*

## ԾԱԽՍԱԾ ԱՇԽՕՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

*Թթագործության և շերամապահության վրա ծախսված աշխօրերի հաշվառումը պետք է կատարել ճիշտ և ժամանակին, ընդհանուր կարգով, որի համար օգտագործել կոլխոզում եղած ձևերն, ինչպես օրինակ՝ «աշխօրերի և բանուժի հաշվառման տեղեկագիր»-ը և այլն։*

Շերամապահական բրիգադների թե մշտական անդամների և թե սեզոնային բանուժի կատարած աշխատանքների և վաստակած աշխօրերի հաշվառումը և գրանցումը պետք է կատարել ժամանակին ընդհանուր կարգով։

## ԲՈԺՈԺԻ ԲԵՐՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Յուրաքանչյուր օղակի ստացած բերքի որակը և քանակը ճիշտ որոշելու համար, անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր օղակի ստացած բոժոժի բերքը հանձնվի մթերակայանին առանձին։

Զանազան կորուստներից խուսափելու համար նախքան բոժոժը մթերակայան տեղափոխելը բերքը կոլխոզում պետք է կշռել և կազմել համապատասխան բեռնագիր։ Բեռնագրի վրա ցույց է տրվում համապատասխան օղակի համարը, օղակավարի ազգանուն և անունը և բեռի քանակը։

Մթերակայանի բոժոժի բերքը հանձնում է կոլխոզի տընտեսվարը, կամ կոլխոզի վարչության կողմից լիազորված անձը, սակայն շերամապահական բրիգադայի բրիգադավարի անմիջական մասնակցությամբ։

Մթերակայանը կոլխոզի կողմից հանձնած բոժոժը հաշվի է առնում ըստ օղակների առանձին և յուրաքանչյուր ստացած պարտիա բոժոժին տալիս է ընդունման օրդեր։

Հանձնած բոժոժի հաշվառումն ըստ օղակների կատարելու համար կոլխոզին խորհուրդ է տրվում օգտվելու հետևյալ տախտակից՝

| № № ըստ կարգի | Օղակավարի ազգանունը, անունը | Բոժոժի հանձնման ժամկետը | Հանձնման օրինակի №-ը | Հանձնել է բոժոժ (կիլոգրամներով) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին տեսակ | 2-րդ տեսակ | 3-րդ տեսակ | Բասի | Ձյութ | Ընդա-մենը |
| 1 | Մարգարյան Զաբել | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | Ընդամենը | | | | | | | | |
| 2 | Սարգսյան Նաշխուն | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | Ընդամենը | | | | | | | | |

Ցեղացու շրջաններում բոժոժի հանձնման կարգը սահմանվում է գրեն գործարանների կողմից։

## ՀԱՆՐԱՅԻՆ ԿԵՐԱԿՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ ԶԲԱՂՎՈՂ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Որդի հանրային կերակրում ունեցող յուրաքանչյուր կոլխոզ պետք է սահմանի կերակրման և թթագործության աշխատանքների համար արտադրական նորմաներ և աշխատանքի վարձատրության չափը, որը հաստատվում է կոլխոզնիկների ընդհանուր ժողովում։

Որպես օրինակելի նորմաներ խորհուրդ է տրվում Հայկական ՍՍՌ Հողժողկոմատի կողմից հաստատված հետևյալ նորմաները՝

## ՈՐԴԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

| №№ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԸ | ՉԱՓԸ | ԳՆԱՀԱՏՈՒՄԸ |
|---|---|---|---|
| 1 | Ցերմատան նախապատրաստումը—մաքրելը, սպիտակացնելը, դեզինֆեկցիան . . . | 2 տուփ | 1,25 աշխօր |
| 2 | Կերակրման դարակների կապելը . . . . . | 2 » | 1,25 » |
| 3 | Գրենայի ինկուբացիա . . . . . . . . . . | 1 օրը | 1,35 » |
| 4 | Բոժոժավելի հավաքելն ու տեղափոխելը . . | 2 տուփ | 1,5 » |
| 5 | Բոժոժավելի փնջերի կապելը . . . . . . . | 500 հատ | 1,0 » |
| 6 | Բերքահավաքին ժամանակավոր բանուժին . | 10 կ. գր. | 1,0 » |
| 7 | Կեր տեղափոխելու համար 5 կիլոմետր տարածության վրա սայլով . . . . . . . . | 1 սայլը | 0,25 » |
| 8 | Թշտին շերամատնից հավաքելու, դուրս տանելու համար . . . . . . . . . . . . | 100 խուրձ | 1,0 » |

## ՈՐԴԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՕՂԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Որդի կերակրումը, տերևի պատրաստումը, խշտիների փոխումը, բոժոժավելների դասավորումը, բերքահավաքը, տեսակավորումը—յուրաքանչյուր մեկ կիլոգրամ բոժոժի համար՝*

| № № ը/կ. | ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ | Գարնան կերակրում | Կրկնակի կերակրում |
|---|---|---|---|
| 1 | Ջոկված ռեպրոդուկցիոն (ցեղացու) . . . | 2,5 աշխօր | — |
| 2 | Ջոկված սերմացու . . . . . . . . . . . | 1,5 » | — |
| 3 | Սելեկցիոն բրակ . . . . . . . . . . . | 1,0 » | — |
| 4 | 1-ին գրուպպա . . . . . . . . . . . . . | 1,25 » | 1,8 աշխօր |
| 5 | 2-րդ գրուպպա . . . . . . . . . . . . . | 1,0 » | 1,4 » |
| 6 | 3-րդ գրուպպա . . . . . . . . . . . . . | 0,8 » | 1,0 » |
| 7 | Բրակ (մթերման) . — . . . . . . . . . | 0,4 » | 0,4 » |
| 8 | Չխար . . . . . . . . . . . . . . . . . | 0,1 » | 0,1 » |

Շերամապահական օղակավարներին իրենց օղակի աշխատանքները ղեկավարելու համար տրվում է լրացուցիչ աշխօր՝ որդի կերակրման աշխատանքներում ամբողջ օղակի կողմից վաստակած աշխօրերի 2—3 տոկոսի չափով։

Օղակի կողմից վաստակած աշխօրերը բաշխվում են օղակի անդամների մեջ, համաձայն որդի կերակրման վրա աշխատած օրերի։

## ՊԼԱՆԻՑ ԱՎԵԼ ՀԱՆՁՆԱԾ ԲՈԺՈԺԻ ԴԻՄԱՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐԱՄԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍՍՌՄ Ժողկոմսովետի և ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի 1941 թվի մարտի 13-ի որոշման համաձայն, պլանից ավելի հանձնած յուրաքանչյուր մեկ կիլոգրամ բոժոժի համար օղակին տրվում է լրացուցիչ դրամական վարձատրություն՝ կոլխոզում մեկ կիլոգրամ բոժոժի միջին արժեքի (մթերակայանի վճարով) 75 տոկոսի չափով, ներառյալ հիմնական վարձատրությունը պարգև—հավելումները, որը կոլխոզն ստանում է կոնտրակտացիայի պլանի գերակատարման համար։

Բոժոժի պլանը գերակատարող օղակին լրացուցիչ դրամական վարձատրություն տրվում է անկախ կոլխոզի բոժոժի մթերման ընդհանուր պլանի կատարումից։

Լրացուցիչ դրամական վարձատրության գումարը բաշխվում է օղակի անդամների մեջ, հաշվելով նաև կեր հայթայթողներին, համաձայն նրանց կողմից վաստակած աշխօրերի։

## ԹԹԵՆՈՒ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՊԼԱՆԻ ԳԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐԱՄԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

ՍՍՌՄ Ժողկոմսովետի և ՀամԿ(բ)Պ ԿԿ 1941 թ. մարտի 13-ի որոշման համաձայն, թթենու տնկիների աճեցման պլանը գերակատարելու համար օղակին տրվում է լրացուցիչ դրամական վարձատրություն հետևյալ չափով՝

Կոլխոզը պլանից ավելի ստացած տնկիների վաճառման գումարի 30 տոկոսի չափով՝ ոչ պատվաստած տնկիների համար և 50 տոկոսի չափով՝ պատվաստած տնկիների համար։

Լրացուցիչ դրամական վարձատրության գումարը բաշխվում է օղակի անդամների մեջ, ըստ նրանց կողմից վաստակած աշխօրերի։

## ՄԵՏԱՔՍՅԱ ԵՎ ԲԱՄԲԱԿՅԱ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

*Հանձնած բոժոժի դիմաց ստացած մետաքսյա և բամբակյա կտորների ոչ պակաս քան 50 տոկոսը կոլխոզը բաշխում է կոլխոզնիկներին, որոնք մասնակցել են որդերի կերակրման աշխատանքներին, հաշվի առնելով նաև կեր մատակարարողներին։*

*Որպես շահագրգռող միջոց որդի հանրային կերակրումը լավ կազմակերպելու ու խնամքը լավ տանելու համար կտորեղենը բաշխվում է գզակների միջև, նրանց կողմից հանձնած բոժոժի արժեքի գումարի համեմատությամբ։*

*Կտորեղենի բաշխումը օղակի անդամների միջ կատարվում է՝ համաձայն նրանց յուրաքանչյուրի կողմից վաստակած աշխօրերի։*

## ԱՎԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

*Շերամապահ կոլխոզնիկների ավանսավորումը կատարվում է ընդհանուր հիմունքներով, բրիգադավարի կողմից ժամանակին ներկայացնելով տեղեկանքներ նրանց կատարած աշխատանքների մասին։*

*Որդերի կերակրման շրջանում, երբ կոլխոզում կատարվում է ավանսավորում, շերամապահ կոլխոզնիկին այդ ավանսից չզրկելու համար, ավանսի կարգով նրանց յուրաքանչյուր աշխատած օրվա համար գրանցվում է մեկ աշխօր։*

## ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

*Որդի կերակրումն ավարտելուց և բոժոժը հանձնելուց անմիջապես հետո շերամապահ կոլխոզնիկի հետ կատարվում է վերջնական հաշվառք, այն է՝ գրանցվում է աշխօրերը, տրվում է լրացուցիչ դրամական վարձատրությունը, և կտորեղենը։*

*Յուրաքանչյուր կոլխոզնիկի կողմից ձեռք բերված աշխօրերը գրանցվում է իր աշխ. գրքույկի մեջ։*

*Լրացուցիչ դրամական վարձատրության գումարները կոլ-*

*խողնիկին տրվում է մթերակայանի հետ հաշվառքը կատարելուց հետո։*

*Շերամապահական օղակների կոլխոզնիկների հետ հաշվառքը ճիշտ, ժամանակին և մատչելի ձևով կատարելու համար խորհուրդ է տրվում օգտվելու հետևյալ աղյուսակներից՝*

Տախտակ № 1

**ԿԵՐԱԿՐՄԱՆ ՉԱՓԸ, ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈԺՈԺԻ ՄԹԵՐՈՒՄԸ**

| *Շերամապահ օղակի № . .* | *Կերակրումը* | *Կերակրման չափը (տուփ.)* | *Բերքատվությունը մեկ տուփից* | *Բոժոժի մթերում. կիլոգրամ.* |
|---|---|---|---|---|
| *1* | *Գարնան* | | | |
| | *Ամռան* | | | |
| | *Աշնան* | | | |
| *2* | *Գարնան* | | | |
| | *Ամռան* | | | |
| | *Աշնան* | | | |
| *Ընդամենը* | *Գարնան* | | | |
| *3* | *Ամռան* | | | |
| *բրիգադայի* | *Աշնան* | | | |
| | *Ընդամենը* | | | |

## ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼԻՔ ՇԵՆՔԵՐԸ

| Շերամապահական օղակների №. | Օգտվելու համար վերցված շենքի անունը | Չափը մետր | | | Մակերեսը (քառ. մետր). | Ծավալը (խոր. մետր) | Հատակի վիճակը | Կերակրման դարա- կաշարի տարածությունը. (քառ. մետր) | Կեր. պահեստ (մետր) | Շենքի և նրա շրջակայքի սանիտարական վիճակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Երկարութ. | Լայնութ. | Բարձրութ. | | | | | | |
| 1 | Գոմ<br>Ամբար<br>և այլն | | | | | | | | | |
| 2 | Ընդամ.<br>Պահեստ<br>Ակումբ<br>և այլն | | | | | | | | | |
| 3 | Շերա-<br>մատուն<br>և այլն | | | | | | | | | |
| Ընդամենը բրիգադային | | | | | | | | | | |

Տախտակ № 3

ԿԵՐԱԿՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

| | ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԸ | ԿԵՐԱԿՐՈՒՄՆԵՐ (ժամկետ) | | |
|---|---|---|---|---|
| | | Գարնան | Ամռան | Աշնան |
| 1 | Ինկուբատորիայի նախապատրաստումը ավարտել . . . . . . . . . . . | | | |
| 2 | Կերակրման շենքերի նախապատրաստումն ավարտել՝ | | | |
| | ա) Որդերի փոքր հասակների համար . . . . . . . . . . | | | |
| | բ) Որդերի մեծ հասակների համար . . . . . . . . . . | | | |
| 3 | Դարակների դասավորումն ավարտել՝ | | | |
| | ա) Որդերի փոքր հասակների համար . . . . . . . . . . | | | |
| | բ) Որդերի մեծ հասակների համար . . . . . . . . . . | | | |

Տախտակ № 4

ԹԹԵՆՈՒ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԱՃԵՑՄԱՆ ՕՂԱԿՆԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

| Տնկանյութի աճեցման օղակի № . . . | Տարածությունը հեկտարով | | Տնկիների պատվաստումը | | Ստանդարտ տնկանյութի ելույթը (հազար հատ) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Մեկ հեկտարից | | | Ամբողջ տարածութ. | | |
| | | | | | | ՏՆԿԻ | | | ՏՆԿԻ | |
| | Ցանքս | Տնկարան (շկոլա) | Հեկտար | Աչք | Բուսակ | Պատվաստած | Ոչ պատվաստած | Բուսակ | Պատվաստած | Ոչ պատվաստած |
| 1 | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | |
| և այլն | | | | | | | | | | |
| Ընդամենը Բրիգադա | | | | | | | | | | |

### ԲՐԻԳԱԴԱՅԻ ԲԱՆՈՒԺԻ ՊԱՀԱՆՋԸ ԵՎ ԱՇԽՕՐԵՐԻ ԾԱԽՍՈՒՄԸ

| ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պահանջվում է բանվորական օր | Աշխօրերի պլանային ծախսումը |
|---|---|---|
| Հատատունկ բնային թթենիների տնկումը և խնամքը . . . . . | | |
| Պլանտացիայի տնկումը և խնամքը . . | | |
| Որդի կերակրումը՝ | | |
| Այդ թվում—գարնան կերակրում . . | | |
| ամռան » . . | | |
| աշնան » . . | | |
| Ցանքսի խնամքը և բուսակների բաշխումը . . | | |
| 1-ի տարվա շկոլայի խնամքը . . | | |
| 2-րդ տարվա շկոլայի խնամքը և տնկիների բաշխումը . . . . | | |
| Ընդամենը . . . | | |

*Շերամապահական բրիգադայի մշտական կազմի համար առանձնացնել ............ տղամարդ, ............ կին, ընդամենը ............ մարդ։*

Տախտակ № 6

### ՄՇՏԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԱՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲԱՆՈՒԺՈՎ

| ԻՆՉՊԻՍԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ | Ժամանակամիջոց | | Քանի մարդ | Որից | |
|---|---|---|---|---|---|
| | Սկիզբը | Վերջը | | Տղամարդ | Կին |
| | | | | | |

## ԻՆՎԵՆՏԱՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ

| №№ ը/կ. | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Չափը | Քանակը | Գինը | Ընդհանուր արժեքը ռուբլով-կոպ. |
|---|---|---|---|---|---|
| | **ՆՅՈՒԹԵՐ** | | | | |
| 1 | Գրենա | | | | |
| 2 | Ֆորմալին | | | | |
| 3 | Թուղթ | | | | |
| 4 | Պարարտանյութ | | | | |
| 5 | Անտառանյութ և այլն | | | | |
| | **ԻՆՎԵՆՏԱՐ** | | | | |
| 1 | Էտաժերկաներ | | | | |
| 2 | Սեկատորներ | | | | |
| 3 | Այգու դանակներ | | | | |
| 4 | Այգու սղոցներ | | | | |
| 5 | Կողովներ և այլն | | | | |

*Որդերի կերակրման առանձին շրջանների օրինակելի տևողությունն ու մեկ տուփ գրենայից ստացած որդի կերակրման յուրաքանչյուր օրվա բանուժի պահանջը (մարդ-օրով).*

| ԿԵՐԱԿՐՄԱՆ ՊԼԱՆԸ | | Ամենօրյա բան. օրվա պահանջը | | | | Մեկ օրվա բանվորական պահանջը |
|---|---|---|---|---|---|---|
| | | Կերի նախապատրաստումը և որդի կերակրումը | Կերի կտրումը և տեղափոխումը | Բոժոժավլենների հավաքելը և տեղափոխումը | Բերքատվությունը | |
| | | **ԳԱՐՆԱՆ ԿԵՐԱԿՐՈՒՄ** | | | | |
| Գրենայի ինկուբացիա | 12 | — | — | — | — | — |
| Կերակրում 1-ին հասակում | 6 | 0,2 | — | — | — | 0,2 |
| » 2-րդ » | 6 | 0,3 | — | — | — | 0,3 |
| » 3-րդ » | 6 | 0,4 | 0,1 | — | — | 0,5 |
| » 4-րդ » | 6 | 0,7 | 0,2 | 0,1 | — | 1,0 |
| » 5-րդ » | 12 | 1,0 | 0,3 | — | — | 1,3 |
| Հյուսում . . . | 6 | — | — | — | — | 0,2 |
| Բերքահավաք . . . | 3 | — | — | — | 2,0 | 2,0 |
| | | **ԿՐԿՆԱԿԻ ԿԵՐԱԿՐՈՒՄ** | | | | |
| Գրենայի ինկուբացիա | 10 | — | — | — | — | — |
| Կերակրում 1-ին հասակում | 3 | 0,25 | — | — | — | 0,25 |
| » 2-րդ » | 5 | 0,4 | — | — | — | 0,4 |
| » 3-րդ » | 5 | 0,7 | 0,3 | — | — | 1,0 |
| » 4-րդ » | 7 | 1,0 | 0,3 | 0,1 | — | 1,5 |
| » 5-րդ » | 10 | 1,33 | 0,67 | — | — | 2,0 |
| Հյուսում . . . | 6 | — | — | — | — | 2,0 |
| Բերքահավաք . . . | 2 | — | — | — | 0,2 | 2,0 |

## ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՇՎԱՌՈՒՔ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ ՀԵՏ

*Շերամապահական օղակի հանձնած բոժոժի դիմաց վաստակած աշխօրերը բաշխվում է օղակի՝ անդամների մեջ հետևյալ ձևով՝*

Օրինակ՝ *օղակավար Սուքիասյան Սաթենիկի օղակը գարնանը կերակրել է 5 տուփ. պլանային բերքատվությունը մեկ տուփից 45 կգ. բոժոժ։ Օղակն ստանալու էր 225 կգ. բոժոժ, սակայն փաստորեն ստացել է 300 կգ., որից 1-ին գրուպպայի բոժոժ—200 կգ., 2-րդ գրուպպայի—50 կգ., 3-րդ—30 կգ., բրակ—15 կգ., չխար—5 կգ., համաձայն հանձնած բոժոժի օղակն ստանալու է աշխօր հետևյալ քանակությամբ՝*

| ԲՈԺՈԺԻ ՏԵՍԱԿԸ | Մեկ կիլոգրամ բոժոժի արժեքը աշխօրերով | Բոժոժի քանակը կիլոգր. | Հասնում է աշխօր |
|---|---|---|---|
| 1-ին գրուպպա . . . . . . . . . . . | 1,8 | 200 | 360 |
| 2-րդ » . . . . . . . . . . . | 1,5 | 50 | 75 |
| 3-րդ » . . . . . . . . . . . | 1,2 | 30 | 36 |
| Բ ռ ա կ . . . . . . . . . . . | 0,6 | 15 | 9 |
| Չ խ ա ր . . . . . . . . . . . | 0,2 | 5 | 1 |
| Ընդամենը . . . . . . | — | 300 | 481 |

*Օղակի կերակրմանը մասնակցել են 5 հոգի, որոնցից յուրաքանչյուրն աշխատել է՝*

1. Սուքիասյանը (օղակավար) . . . . . . 50 օր
2. Վարդանյանը (կերակրող) . . . . . . 45 »
3. Մարգարյանը » . . . . . . 25 »
4. Հակոբյանը » . . . . . . 15 »
5. Հարությունյանը (կերակրող և կեր տեղափոխող) . . . . . . . . 15 »

Ընդամենը . . . . . . . . 150 օր

Օղակի յուրաքանչյուր անդամի հասանելիք աշխօրի չափը որոշելու համար պետք է նախ դուրս բերել օղակի միջին աշխօրը. այն է՝ օղակի կողմից վաստակած աշխօրերի քանակը բաժանվում է աշխատած օրերի վրա, հետևյալ կերպ՝ 481 աշխօր : 150 օր=3,21 աշխօր, ապա այդ միջին աշխօրը բազմապատկվում է օղակի յուրաքանչյուր անդամի աշխատած օրերի վրա, հետևյալ կերպ՝

Ստեփանյանին—3,21×50=160,50 աշխօր
Վարդանյանին—3,21×45=144,45 »
Սարգսյանին —3,21×25=80, 4 »
Հակոբյանին —3,21×15=48,15 »
Հարությունյանին—3,21×15=48,15 »

Բացի դրանից, Ստեփանյանը որպես օղակավար ստանալու է օղակի կողմից վաստակած աշխօրերի 2 տոկոսի չափով աշխօր, որը կազմում է 9,62 աշխօր. ուստի օղակավարն ստանալու է ընդամենը 170,12 աշխօր։

## ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՇՎԱՌՔ

### ՊԼԱՆԻ ԳԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐԱՄԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԲԱՇԽՄԱՆ՝ ՕՂԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԵՋ

Լրացուցիչ դրամական վարձատրության գումարը բաշխվում է օղակի անդամների մեջ հետևյալ ձևով։

Օրինակ՝ կոլխոզը կիրառել է 50 տուփ գրենա, որի պլանային բերքատվությունը մեկ տուփի—45 կգ., ուստի կոլխոզը հանձնելու է 2250 կգ. բոժոժ, սակայն փաստորեն հանձնել է 2750—կգ., այդ թվում 1-ին գրուպպայի բոժոժ—1140 կգ.,2-րդ—900 կգ., 3-րդ—450 կգ., բրակ—200 կգ. և չխար—60 կգ.։

Կոլխոզի հանձնած բոժոժի հիմնական արժեքն է կազմել 27757 ռուբլի, իսկ պլանից ավելի հանձնած բոժոժի համար ստացել է լրացուցիչ պարգև—հավելում 4204 ռուբլի։ Այսպիսով կոլխոզն իր հանձնած բոժոժի դիմաց ստացել է՝ 27757 ռուբլի+ +4204 ռ.=31961 ռուբլի։

Բաժանելով այդ գումարն ստացած բոժոժի քանակի վրա, որոշվում է մեկ կիլոգրամի արժեքն, այն է՝ 31961 : 2750 կգ.= 11 ռ. 62 կոպեկ։

Այդ միջին արժեքի 75 տոկոսն է, որ տրվում է պլանից

ավելի հանձնած յուրաքանչյուր մեկ կիլոգրամ բոժոժին, որը կազմում է (11 ռ. 62 կ. : 100)+75=8ռ. 71 կոպեկ։

Բոժոժի բերքատվության պլանը գերակատարող օղակին հասանելիք լրացուցիչ դրամական վարձատրության չափը որոշելու համար, այդ գումարը, այն է՝ 8 ռ. 71 կ. բազմապատկվում է օղակի կողմից պլանից ավելի հանձնած բոժոժի քանակի վրա։

Օրինակ՝ Ստեփանյանի օղակը պլանից ավելի հանձնել է 75 կգ. բոժոժ, օղակի լրացուցիչ դրամական վարձատրության չափը կկազմի՝ 8 ռ. 71 կ.×75=653 ռ. 25 կոպ.։ Օղակի անդամների հետ լրացուցիչ դրամական վարձատրության գումարի բաշխումը կատարելու համար, անհրաժեշտ է որոշել մեկ աշխօրին հասանելիք դրամական վարձատրության չափը, որից հետո այդ գումարը բազմապատկվում է կոլխոզնիկի կողմից վաստակած աշխօրերի քանակի վրա։

Այսպես, օրինակ՝ Ստեփանյանի օղակը վաստակել է 491,12 աշխօր, ստացել է պարգևատրում 653 ռուբլի 25 կոպեկ, ուստի մեկ աշխօրին հասնում է լրացուցիչ դրամական վարձատրություն հետևյալ չափով՝ 653 ռ. 25 կոպ. : 491,12 աշխօրի=1 ռուբլի 33 կոպ.։

Այսպիսով օղակի յուրաքանչյուր անդամը կստանա՝

| ՕՂԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ | Մեկ աշխօրի լրացուցիչ դրամական վարձատրութ. | Վաստակած աշխօրերի քանակը | Ընդամենը հասնում է լրացուցիչ դրամական վարձատրութ. |
|---|---|---|---|
| Ստեփանյանը . . . . . . . | 1 ռ. 33 կոպ. × | 170,12 = | 233 ռ. 96 կ. |
| Վարդանյանը . . . . . . . | 1 ռ. 33 կոպ. × | 144,45 = | 192 ռ. 13 կ. |
| Մարգարյանը . . . . . . . | 1 ռ. 33 կոպ. × | 80,25 = | 126 ռ. 75 կ. |
| Հակոբյանը . . . . . . . | 1 ռ. 33 կոպ. × | 48,15 = | 64 ռ. 04 կ. |
| Հարությունյանը . . . . | 1 ռ. 33 կոպ. × | 48,15 = | 64 ռ. 04 կ. |

Ծանոթություն.—Եթե կոլխոզը չի կատարել իր բոժոժի հանձնման պլանը, ուստի և չի ստանում պարգև—հավելում, սակայն պլանը գերակատարող օղակին տրվում է դրամական վարձատրություն. այդ դեպքում մեկ կիլոգրամ բոժոժի միջին արժեքը հաշվվում է հանձնած բոժոժի հիմնական արժեքից։

## ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՇՎԱՌՔ

### ՄԵՏԱՔՍՅԱ ԵՎ ԲԱՄԲԱԿՅԱ ԿՏՈՐԵՂՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ

Կոլխոզը հանձնել է պետությանը 6150 կգ. բոժոժ, հիմնական արժեքով 68884 ռուբլի. կոլխոզը ստանալու է կտորեղեն հանձնած բոժոժի հիմնական արժեքի 45 տոկոսի գումարի չափով, որը կազմում է (68884 ռ. : 100)×45=30998 ռ.։

Կոլխոզնիկների ընդհանուր ժողովը որոշել է բաշխել շերամապահներին այդ կտորեղենից 65 տոկոսի չափով, հետևապես դա կազմում է (30998 ռ. : 100)×65=20149 ռ. արժողությամբ կտորեղեն։

Յուրաքանչյուր օղակին հասանելիք կտորեղենի քանակը որոշելու համար պետք է որոշել, թե կոլխոզի կողմից հանձնած բոժոժի յուրաքանչյուր մեկ կիլոգրամին ինչ գումարի կտորեղեն է հասնում, դրա համար 20149 ռուբ. : 68884 կգ.=0,29 ռուբլի։ Ապա այդ գումարը բազմապատկվում է յուրաքանչյուր օղակի կողմից հանձնած բոժոժի արժեքի վրա հետևյալ կերպ՝

| Օղակների №№ | Հանձնած բոժոժի արժեքը | | Մեկ ռուբլուն հասնում է | | Օղակին հասանելիք կտորեղենի արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 6850 ռ. | × | 0,29 | = | 1986 ռ. 50 կոպ. |
| 2 | 7036 ռ. | × | 0,29 | = | 2040 ռ. 44 կոպ. |

Ապա պետք է որոշել, թե յուրաքանչյուր օղակին ինչ գումարի կտորեղեն է հասնում մեկ աշխօրին, դրա համար կատարվում է հետևյալ հաշվարկը՝

| Օղակի № | Օղակին հասնում է կտորեղեն գումարով | | Օղակը վաստակել է աշխօր | | Մեկ աշխօրին հասնում է կտորեղեն գումարով |
|---|---|---|---|---|---|
| 1 | 1986—50 | : | 530 | = | 3 ռ. 75 կոպ. |
| 2 | 2040—44 | : | 605 | = | 3 ռ. 37 կոպ. |

Հետագայում այդ մեկ աշխօրին հասանելիք կտորեղենի գումարը բազմապատկվում է օղակի անդամի կողմից վաստակած աշխօրերի քանակի վրա հետևյալ կերպ՝

| № ը/կ | Օղակի անդամի ազգանունը, անունը | Վաստակած աշխօրերի քանակը | Մեկ աշխօրին ընկնող կանխիկ դրամի չափը | Ընդամենը հասնում է կանխիկ դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | *Սարգսյան Նուբար* | 60 × | 3,75 = | 225 ռ. |
| 2 | *Մարտիրոսյան Աստղիկ* | 35 × | 3,75 = | 131 ռ. 25 կ. |
| | *և այլն։* | | | |

## ՕՐԻԵՆՏԻՐ ՀԱՇՎԱՌՔ

### ԹԹԵՆՈՒ ՏՆԿԱՐԱՆԻ ԱՃԵՑՄԱՆ ՊԼԱՆԻ ԳԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐԱՄԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՂԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԵՋ ԱՅԴ ԳՈՒՄԱՐԻ ԲԱՇԽՄԱՆ

*Թթենու ստանդարտ տնկանյութի աճեցման պլանը գերակատարելու դեպքում օղակն ստանում է լրացուցիչ դրամական վարձատրություն, որի հաշվառքը կատարվում է հետևյալ կերպ՝*

#### ՄԵԿ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԱՐԺԵՔԸ ԿՈՊԵԿՆԵՐՈՎ

| Տնկանյութի տեսակը | ԲՈՒՍԱԿՆԵՐ | | ՏՆԿԻՆԵՐ | |
|---|---|---|---|---|
| | Ոչ ստանդարտ | Ստանդարտ | Ոչ ստանդարտ | Ստանդարտ |
| 1-ին | 5 | 6 | 80 | 120 |
| 2-րդ | 3,5 | 4,5 | 65 | 90 |
| 3-րդ | 1,5 | 2,5 | 42 | 60 |

*Օղակը խնամել է մեկ հեկտար թթենու ցանքս, պլանային առաջադրանքն է 225000 բուսակ, սակայն լավ աշխատանքի հետևանքով ստացել են 400,000 ստանդարտ բուսակ։*

*Լրացուցիչ դրամական վարձատրության գումարի չափը որոշելու համար պետք է որոշել, թե օղակը պլանից ավելի որքան բուսակ է ստացել, դրա համար՝ 400,000—225,000 = 176,000 հատ բուսակ։ Ապա որոշվում է մեկ բուսակի միջին արժեքը, որի համար կատարվում է հետևյալը՝*

| Տնկանյութի տեսակը | Մեկ բուսակի արժեքը (կոպ.) | Ստացված բուսակների քանակը (հազար.) | Ստացված տնկանյութի արժեքը (ռուբլ.) |
|---|---|---|---|
| 1-ին | 6 | 290 | 17400 |
| 2-րդ | 4,5 | 90 | 4050 |
| 3-րդ | 2,5 | 20 | 500 |
| Ընդամենը՝ | | 400 հազ. հատ | 21950 ռուբլի |

Այս տնկանյութի ամբողջ արժեքը բաժանելով քանակի վրա ստացվում է մեկ բուսակի միջին արժեքը, այն է՝ 21920 ռ. : 400000=5,84 կոպ., այդ միջին արժեքը բազմապատկելով պլանից ավելի հանձնած բուսակների քանակի վրա, այն է՝ 5,84 կոպ.× 175,000=9590 ռուբլի, որը և կլինի լրացուցիչ դրամական վարձատրության չափը, որի 50 տոկոսը բաշխվելու է օղակի անդամներին։ Այդ բոլորից հետո որոշվում է մեկ աշխօրին հասանելիք գումարը և այդ միջին թիվը բազմապատկելով յուրաքանչյուր կոլխոզնիկի վաստակած աշխօրերի թվի վրա, ստացվում է նրա հասանելիք լրացուցիչ դրամական վարձատրության չափը։

Ստանդարտ տնկիների ստացման պլանը գերակատարելու դեպքում, լրացուցիչ դրամական վարձատրության հաշվարկը կատարվում է նույն ձևով, ինչ-որ բուսակների դեպքում, սակայն այն տարբերությամբ, որ հաշվի է առնվում կոլխոզնիկի կողմից շկոլայի առաջին դաշտում կատարած աշխատանքների համար ստացած աշխօրերը նույնպես։

## ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՇՎԱՌՔ

### ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻՈՆ ՊԼԱՆԻՑ ԱՎԵԼԻ ՀԱՆՁՆԱԾ ԲՈԺՈԺԻ ՊԱՐԳԵՎ-ՀԱՎԵԼՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ

Պլանից ավելի հանձնած յուրաքանչյուր մեկ կիլոգրամ բոժոժի համար կոլխոզին վճարվում է պարգև-հավելում մթերման գնի հետևյալ տոկոսների չափով՝

| Բաժնի կոնտրակտացիայի պլանի մեկ տան գրենայից (կիլոգրամ) | | Պարգև-հավելման տոկոսը |
|---|---|---|
| Գարնան կերակրում | Աշնանը կերակրում | |
| 25-ից—35 | 20-ից—25 | 40 |
| 36 »—40 | 29 »—30 | 60 |
| 41 »—45 | 31 »—35 | 100 |
| 46 »—50 | 36 »—40 | 175 |
| 51 »—55 | 41 »—45 | 250 |
| 56-ից բարձր | 46-ից բարձր | 300 |

Հաշվառքի ժամանակ պետք է ղեկավարվել թույլատրվելիք դեֆեկտավոր բոժոժների (բաակ, չխար) հետևյալ նորմաներով՝

Մեկ տուփի բերքատվությունը մինչև 35 կգ.—2 կգ. դեֆեկտավոր բոժոժ
» » » 35-ից 55 կգ.—3 » » »
» » » 55-ից բարձր—4 » » »

Օրինակի համար—կոլխոզը կերակրել է 100 տուփ գրենա միջին բերքատվությունը 56 կգ.,կ ոլխոզը հանձնել է պետությանը 6500 կգ. բոժոժ, որից 1-ին գրուպպայի—4000 կգ., 2-րդ գրուպպայի 1500 կգ., 3-րդ—700 կգ., բաակ—240 կգ., չխար—60 կգ.։ Նախ պետք է որոշել, թե կոլխոզը որքան նորմալ բոժոժ էր հանձնելու, որի համար մեկ տուփի կոնտրակտացիոն բերքատվությունից պետք է հանել դեֆեկտավոր բոժոժի քանակն, ապա բազմապատկել կերակրվող տուփերի քանակի վրա, հետևյալ կերպ՝ մեկ տուփից—56 կգ.—4=52 կգ.×100տուփի=5200 կգ.։ Ուստի կոլխոզը պլանով հանձնելու էր 5200 կգ. նորմալ բոժոժ, սակայն փաստորեն հանձնել է 6200 կգ., որից 1-ին գրուպպայի 4000 կգ., 2-րդ—1500 կգ., 3-րդ—700 կգ., հետևապես կոլխոզը գերակատարել է իր նորմալ բոժոժի պլանը 1000 կգ., որի համար էլ ստանում է պարգև-հավելում։

Պարգև-հավելման գումարի հաշվառքը կատարելու համար անհրաժեշտ է որոշել մեկ. կիլոգրամ նորմալ բոժոժի արժեքը, այդ արվում է յուրաքանչյուր գրուպպա բոժոժի քանակը բազմապատկելով նույն գրուպպայի մեկ կիլոգրամ բոժոժի արժեքի վրա, որից հետո ստացած գումարը բաժանվում է նորմալ բոժոժի ընդհանուր քանակի վրա հետևյալ կերպ՝

| | Ըստ գրուպպաների | 1-ին | 2-րդ | 3-րդ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բոժոժի քանակը (կգ.) | 4000 | 1500 | 700 | 6200 |
| 2 | Մեկ կիլոգրամի արժեքը | 12 ռ. 30 կ. | 10 ռ. 15 կ. | 8 ռ. 20 կ. | — |
| 3 | Բոժոժի ընդհանուր արժեքը (ռուբլիներով) | 49200 | 15225 | 5740 | 70165 |

70165 ռուբլի : 6200 = 11 ռուբլի 32 կոպեկ։

Ապա պարգև-հավելման գումարը որոշելու համար բոժոժի միջին արժեքը պետք է բազմապատկել պլանից ավելի հանձնած նորմալ բոժոժի քանակի վրա, ապա ստացած գումարը բազմապատկելով պարգև-հավելման համապատասխան տոկոսով կըստացվի կոլխոզին հասանելիք պարգևատրման գումարը. այդ կատարվում է հետևյալ կերպ՝

11 ռ. 32 կոպ. × 1000 կգ. = 11320 ռուբ.։

(11320 : 100) × 300 = 33960 ռուբլի։

Ուրիշ օրինակ։ Կոլխոզը կերակրել է 50 տուփ գրենա, կոնտրակտացիոն միջին բերքատվությամբ—51 կգ., սակայն կոլխոզը հանձնել է 3000 կգ. բոժոժ, ստանալով մեկ տուփից 60 կգ. բոժոժ, հանձնած բոժոժը եղել է 1-ին գրուպպայի—300 կգ., 2-րդ—900 կգ., 3-րդ—1140 կգ., բռակ—510 կգ., չխար—150 կգ.։ Կոլխոզն ըստ պայմանագրի պետք է մեկ տուփից հանձնի 51 կգ.—3 կգ. = 48 կգ. նորմալ բոժոժ, իսկ 50 տուփից 2400 կգ., սակայն հանձնել է 2340 կգ. հետևապես կոլխոզը չնայած գերակատարել է ընդհանուր մթերման պլանը, սակայն պարգև-հավելում չի ստանում, քանի որ չի կատարել նորմալ բոժոժի պլանը։

ՎՖ 2790 ։ Պատվեր № 288։ Տիրաժ 1000։ Ստորագրված է տպագրության
1942 թ. հունիսի 13-ին։

ՀՓՀ Գիտամանկավարժական հրատ. տպարան, Երևան, Աբովյան, 104

## ՎՐԻՊԱԿ

| Էջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 32 | Ներք. 16 | մնացած որդերին ու կերակրել նրանց։ | Բոժոժավորիչները պետք է դասավորել այնպես, որ հնարավոր լինի կերակրել որդերին, իսկ հետագայում հավաքել հետ մնացած որդերին ու կերակրել նրանց։ |

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0007938

[54]

254

ЦЕНА
71
19302

ՁՐԻ

**Как организовать общественное**
**шелководство в колхозах**

(На армянском языке)

АРМШЕЛКТРЕСТ

Тип. Научно-педагог. изд. НКП. Ереван, Абовян 104